

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ ՕՄԱՆԻ ՍՈՒԼՏԱՆՈՒԹԵՆԸ ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԸՆԴՊԻՆԵՅ

Երկուշաբթի, 31 Յունուար 2022-ին, Սուրիոյ Նախագահութեան պաշտօնական կայքը հաղորդեց, որ Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ ընդունեց Օմանի Սուլթանութեան արտաքին գործոց նախարար Պատր պըն Յամատ Պուսասաիտի եւ անոր ընկերակցող պատուիրակուիւնը: Ինչպէս որ ընթացքին կողմերը խորհրդակցեցան երկու երկիրներուն եզակի յարաբերութեան եւ գործակցութեան շուրջ: Անոնք շեշտեցին, որ Սուրիոյ եւ Օմանի գործակցութիւնը պիտի շարունակուի եւ զարգանայ՝ ի նպաստ երկու երկիրներուն եւ արաբական տարածաշրջանին: Կողմերը խորհրդակցեցան նաեւ արաբական եւ տարածաշրջանային վերջին զարգացումներուն շուրջ, ուր Ասատ շեշտեց, որ Սուրիա եւ Օման համակարծիք են շատ մը հարցերու նկատմամբ: Ան բարձր գնահատեց Օմանի սկզբունքային քաղաքականութիւնը եւ աջակից կեցուածքը Սուրիոյ ժողովուրդին հանդէպ: Նախագահ Ասատ ակեցուց. «Կարծիքովս, մենք որպէս արաբական երկիրներ խիստ կարիք ունինք քաղաքական մեր յարաբերութիւններուն սկզբունքները ճշդելու եւ տրամաբանական երկխօսութիւններու ձեռնարկելու, ի նպաստ արաբական ժողովուրդին»: Ան շեշտեց, որ արաբական՝ միջավայրի զարգացումներուն հետ վերաբերիլը բարեփոխումներ կը պահանջէ քաղաքական մօտեցումին մէջ: Իր կարգին Օմանցի նախարարը Օմանի Սուլթան Յայսամ պըն Թարեքի ողջունեց փոխանցեց Նախագահ Ասատին, շեշտելով, որ Սուրիան արաբական աշխարհին մէջ ունի իր կարեւոր դիրքը, եւ կարելի է Սուրիոյ վստահիլ անոր արաբական մակարդակով այլազան հարցերու լուծման համար:



## ԱԺ «ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Երոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի «Հայաստանի ՄԷջ Ժողովրդավարական Հիմնարկներու Գործունէութիւնը» նիւթով բանաձեւի մասին կ'ուզեք արձանագրել:

1) 44-օրուան պատերազմի սանձազերծումին, ատրպէյ-ճանա-թրքական յարձակումին, ուժի կիրառման, պատերազմի ընթացքին Ատրպէյճանի կողմէ միջազգային մարդասիրական սկզբունքներու կոպիտ խախտումներուն, ինքնորոշման իրաւունքի նսեմացման ու մինչ օրս հայ ռազմագերիներու ամկայութեան փաստին, պատերազմէն վերջ Հայաստանի ինքնիշխան տարածքին նկատմամբ շարունակական յարձակումի իրականացման, թշնամական հռետորաբանութեան եւ ուժի ու ուժի սպառնալիքի շարունակական կիրառումին ի տես՝ Երոպական կառոյցները զբաղած էին ու զբա-



ղած են յարձակումը խրախուսող աջակցութեամբ, իսկ արձագանգելու ընթացքին կը փորձեն «հաւասարութեան» նշան դնել Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ, ինչ որ անհեթեթութիւն է: Յատկանշական է, որ ռազմագերիներու ապօրինի պահումէն ակեցի նուազ իրաւունքներու խախտումներով նոյն կառոյցը հանդէս կու գար պետութեան նկատմամբ որոշակի սահմանափակումներու առաջարկով, իսկ այս պարագային՝ Ատրպէյճանի ու Թուրքիոյ անպատժելիութեան ուղերձ յղած է:

2) ԵԽԽՎ-ը որեւէ ձեւով չէ անդրադարձած նախընտրական եւ ընտրութիւններու օրը վարչական աղբիւրի ու ընտրական արձանագրութեամբ այլ խախտումներու, մօտաւորապէս վեց ամիս Ազգային ժողովի երեք ընդդիմադիր պատգամաւորներու ապօրինի կալանաւորման, ընդդիմադիր պատգամաւորներու տեղաշարժի հակասահմանադրական սահմանափակման, 2021-ին 80%-էն ակեցի կալանաւորումներուն, քաղաքական հետապնդումներուն, կալանքներուն եւ «կալանքի դատարաններու» ստեղծման:

3) ԵԽԽՎ-ը փաստօրէն չէ արձագանգած դատարաններու ելեկտրոնային մակագրման համակարգին՝ մօտաւորապէս ութ ամիս գործադիր կողմէն առգրաւումին ու մինչ օրս բոլոր գործերու «ձեռքով» մակագրման հակասահմանադրական գործադրումին կամ ՏԻՄ ընտրութիւններուն ու յետընտրական փուլը ընտրողներու կամքի անտեսման փաստներուն:

4) ԵԽԽՎ-ը «Ժողովրդավարական» կը համարէ խօսքի ազատութեան նոր սահմանափակումները եւ չի նկատեր լրագրողներու իրաւունքներու խախտումի դէպքերը Ազգային ժողովին մէջ:

Թուարկուած բոլոր հարցերու փաստական հանգամանքները 4 Նոյեմբեր 2021-էն ներկայացուած էին ԵԽԽՎ-ին՝ թէ՛ բանաւոր, եւ թէ՛ գրաւոր կարգով:

ԱԺ «Հայաստան» խմբակցութիւն  
 29.01.2022

## ՀԱՅՈՅ ԲԱՆԱԿԻ ՕՐՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ ԸՆՈՐՀԱԽՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀՀ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԻՆ

Ուրբաթ, 28 Յունուար 2022-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Զօպուեան, Հայոց Բանակի օրուան առիթով, ազգային պատուիրակութեամբ շնորհաւորական այցելութիւն տուաւ ՀՀ Մարդասիրական Առաքելութեան խումբին:

Սրբազան հայրը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը ջերմապէս դիմաւորուեցան Մարդասիրական Առաքելութեան խումբի հրամանատար գնդապետ Արմէն Աւագեանի, մարդասիրական խումբի ակնազգ երծողներուն եւ բժիշկներուն կողմէ:



Հանդիպումը բացուեցաւ Հայաստանի Հանրապետութեան քայլերգով: Գնդապետ Արմէն Աւագեան բարի գալուստի խօսք արտասանեց եւ Հայոց Բանակի օրուան առիթով շնորհաւորեց մարդասիրական առաքելութեան խումբը:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր խօսքին մէջ յայտնեց, թէ այս օրը հայ ժողովուրդի զաւակներուն համար հայրենիքի թէ՛ Սփիւռքի մէջ հպարտութեան օր է:

«Հայոց բանակի օրը յիշատակել կը նշանակէ յիշել մեր յաղթանակները, շարունակելով մեր պայքարը: Հայոց Բանակը կը պայքարի հայրենիքը պաշտպանելու, ինչպէս նաեւ Սփիւռքը հայկական գաղութներէն ներս կը պայքարի հայրենիքը եւ մեր ազգային-եկեղեցական արժէքները պահպանելու համար», հաստատեց Սրբազան Հայրը:

Մասիս եպիսկոպոս շեշտեց, թէ Հայոց բանակը երաշխիքն է հայրենիքի մէջ ապահովութեան եւ խաղաղութեան հաստատման:

Սրբազան հայրը, Բերիոյ Հայոց Թեմի անունով շնորհաւորեց մարդասիրական առաքելութեան խումբի մասնագետները, գնահատեց Սուրիոյ մէջ անոնց տարած մարդասիրական ծառայութիւնը եւ մաղթեց, որ մեր հայրենիքին՝ Հայաստանին ու Արցախին անվտանգութիւնը ապահովող հայոց բանակը միշտ հզօր եւ կանգուն մնայ:



### Խմբագրական

## ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՔԱՌՈՒՄԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Սուրիոյ Հիւսիսային շրջանի մէջ ապրող հայութիւնը վերջին տարիներուն զգայուն վիճակի մէջ կ'ապրի: Գամիշլիի, Յասիչէի եւ Տերիքի մէջ ապրող հայութիւնը ականատեսն է այդ շրջանին մէջ տարբեր ուժերու ներգործութեան, որոնցմէ ամենէն վտանգաւորը թրքական ուժերն են:

Թուրքիա Սուրիոյ Հիւսիսային շրջանին մէջ 30 քլմ. խորութեամբ իր հսկողութիւնը պահպանելու ջանք կը թափէ՝ քրտական գործօնին ազդեցութիւնը տկարացնելու եւ սուրիական տագնապի լուծման մէջ իր լծակներն ու ազդեցութիւնը ամրագրուած տեսնելու հեռանկարով: Թուրքիոյ ներկայութիւնը վտանգ կը հանդիսանայ նաեւ Սուրիոյ ժողովուրդին ընդհանրապէս, նկատի ունենալով պատերազմի տարիներուն ահաբեկչական խմբաւորումներու դէպի Սուրիա հոսքին մէջ Թուրքիոյ ունեցած առաջնային դերը, սուրիացի գաղթականներու թղթածրարը շահագործելու քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ Սուրիոյ քարիւղն ու գործարանները թալանելու մշտական ճիգը:

Միւս կողմէ, քրտական եւ ամերիկեան ուժերու ներկայութիւնը թոյլ չի տար, որ սուրիական տագնապը իր շուտափոյթ լուծման հորիզոնները ուրուագծէ:

Մինչդեռ ռուսական ներկայութիւնը, Սուրիոյ պետութեան հաւանութեամբ, շրջանին մէջ մնացեալ օտար ուժերու ներկայութիւնը զսպելու եւ սուրիական բանակին դերակատարութիւնը շեշտադրելու գործօն կը հանդիսանայ:

Այս պայմաններուն մէջ, սուրիական բանակն ու պետական ենթակառուցները կը շարունակեն իրենց ներկայութիւնը շրջանի նահանգներուն մէջ:

Հիւսիսային շրջանին մէջ իր գոյութիւնը շարունակող հայութիւնը, Սուրիոյ ժողովուրդի այլ մասնիկներուն կողքին, զգուշութեամբ կը հետեւի իրավիճակին, քաղաքացիի իր պարտաւորութիւններուն տէր կանգնելով մշտապէս: Ան կը շարունակէ իր համայնքային կեանքը՝ վարժարաններու, ակումբներու եւ եկեղեցիներու շուրջ համախմբելով հայութիւնը:

Անցնող շաբթուան ընթացքին, Յասիչէի հարաւային շրջանին մէջ ՏԱՅԵՇ ահաբեկչական խմբաւորումին կազմակերպած Ղուէյրան բանտի պայթումը անգամ մը եւս լարեց իրավիճակը, ահաբեկչական այս խմբաւորման ներկայութիւնը եւս զգալի դարձնելով շրջանին մէջ:

Բարեբախտաբար Յասիչէի հայութեան վտանգ չէր սպառնար եւ ան կը շարունակէ զգուշութեամբ հետեւիլ տարաբնոյթ զարգացումներուն:

Եթէ սուրիահայութիւնը ընդհանրապէս կը դիմագրաւէ տնտեսական եւ կենցաղային անսախաղէպ դժուարութիւններ երկրի շրջափակման եւ պատերազմի հետեւանքներուն երկարաձգման բերումով, հիւսիսային շրջանի հայութիւնը առաւել լարուած շրջանի մը մէջ կը շարունակէ իր գոյութիւնը՝ ապաւինելով իր հաւասարակշռուած քաղաքականութեան եւ զսպուածութեան:

Այսօր, ամեն ժամանակներէ աւելի, սուրիահայութիւնը մնալու է համահայկական մեր ընտանիքի ուշադրութեան սեւեռակետին մէջ, որպէսզի պահպանէ իր դիմադրողական ուժն ու գոյատեւելու կամքը:


Այսպիսի ծանր պայմաններու մէջ ապրող սուրիահայ համայնքը կը շարունակէ համայնքային-ազգային իր կեանքը ծաղկուն պահել, սփիւռքեան իրականութեան մէջ իր դերատարութիւնը շարունակել, այնքան ատեն որ նոր սերունդներ կը հասնին գունաւորելու անոր կեանքն ու կազմակերպչական աշխուժութիւնը, նոյնիսկ նման ծանր պայմաններու մէջ:

«Գ.»

-Երեքշաբթի, 1 Փետրուար 2022-ին, Սուրիոյ ներքին առևտուրի եւ սպառողի պաշտպանութեան նախարար դոկտ. Ամր Սալէմ ՍԱՆԱ-ի թղթակիցին հաղորդեց, որ «խելացի քարտ»ին ճամբով հասնող ծառայութիւններէն քաղաքացիներու որոշ համեմատութեան գերծ կացուցուիլը հիմնուած էր անոնց տնտեսական կարելիութիւններուն վրայ: Այնուամենայնիւ, նախարարը շեշտեց, որ անոնք կրնան օգտուիլ այդ ծառայութիւններէն ազատ շուկայի գիներով ստանալով զանոնք, իսկ կառավարութեան ներկայացուած գանգատները նկատի պիտի առնուին եւ անգամ մը եւս սերտողութեան պիտի ենթարկուին վերոնշեալ քաղաքացիներուն իրավիճակը: Նախարարը շեշտեց, որ ճիշդ չէ շրջանառուող այն լուրը, թէ կառավարութիւնը հանգրուանաբար չեղեալ պիտի համարէ «խելացի քարտ»ի օգտագործման դրութիւնը: «Ան որ կարիք ունի օժանդակութեան, պիտի ստանայ այդ քարտին ճամբով», եզրակապեց նախարարը:



-Սուրիոյ կառավարութիւնը վարչապետ Արնուսի գլխաւորութեամբ իր գումարած նիստին հաստատեց, որ ըստ պետական ամսականներու սանդղակին, որեւէ պաշտօնեայ կամ թոշակառու, որ պարզապէս անձնական մեքենայ ունենալուն պատճառով դուրս մնացած է «խելացի քարտ»էն օգտուողներու ցանկէն, իրավիճակի վերասերտողութեան պիտի ենթարկուի եւ վերստին ներգրաւուի աջակցութեան ցանկին մէջ՝ կայքին միջոցով առարկութիւն ներկայացնելէ ետք: Վարչապետ Արնուս յայտնեց, որ աջակցութիւնը պիտի վերապահուի միայն այն քաղաքացիներուն, որոնք անոր կարիքը ունին:



-Երկուշաբթի, 31 Յունուար 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ առաւօտեան ժամը 3:05-ին, Իսրայէլ հրթիռներ արձակեց Պէյրութի արեւելեան «Ռիաք» շրջանէն, թիրախ դարձնելով Ղամասկոսի շրջակայքը գտնուող կարգ մը զինուորական կեդրոններ: Ադրբիւրը յայտնեց, որ սուրիական հակաօդային պաշտպանութեան համակարգերը դեմ դրին հրթիռներուն, վար առնելով անոնց մեծամասնութիւնը: Ադրբիւրը աւելցուց, որ հրթիռակոծման հետեւանքով նիւթական բազմաթիւ վնասներ արձանագրուեցան:



-Երկուշաբթի, 31 Յունուարին, Օմանէն պետական պատուիրակութիւն մը Սուրիա ժամանեց, նախագահութեամբ արտաքին գործոց նախարար Պատր պըն Յամատ պըն Յամուտ Պուսասիտի:

Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ Մըքտատ պատուիրակութիւնը ընդունելով ըսաւ. «Երկու բարեկամ եւ եղբայր երկիրներուն միջեւ յարաբերութիւնը կը շարունակուի: Մենք կը յիշենք, թէ Օմանի Իշխանութիւնը ինչպէ՛ս նեցուկ կանգնեցաւ Սուրիոյ՝ ահաբեկչութեան դէմ իր պատերազմի որջ ընթացքին»:

Իր կարգին օմանցի նախարարը ըսաւ. «Ուրախ եմ, որ Օմանի եւ Սուրիոյ մէջ ռազմավարական յարաբերութիւնը կը զարգանայ», աւելցնելով, որ Օման կը ձգտի երկու երկիրներուն գործակցութիւնը զարգացնել:





Լուրեր Հայաշխարհին

«ՔԱՂԱՔԱՅԻՎԱԿԱՆ ԴԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՌԱՋԱԴՐԵՅՑ ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆԸ

Երեքշաբթի, 1 Փետրուարին լրագրողներուն հետ զրոյցի մը ընթացքին Հայաստանի նախագահի պաշտօնակատար Ալեն Սիմոնեան ըսաւ, որ «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութիւնը նախագահի թեկնածու առաջադրեց բարձր արհեստագիտութեան արդիւնաբերութեան նախարար Վահագն Խաչատուրեանը:



Նշենք, որ ըստ Հայաստանի Սահմանադրութեան, Հայաստանի նախագահի պաշտօնակատարն է, իրազօրութիւններու կատարման անկարելիութեան, հրաժարականի կամ մահուան պարագաներուն, մինչեւ նորընտիր նախագահին կողմէ պաշտօնի ստանձնումը, հանրապետութեան նախագահի լիազօրութիւնները կը կատարէ Ազգային ժողովի նախագահը:

Հաւանական է, որ նոր նախագահի ընտրութիւնը տեղի ունենայ 25 Փետրուարէն սկսեալ տասը օրուան ընթացքին:

Մինչ այդ, Երեքշաբթի, 1 Փետրուարին դադրեցան Արմէն Սարգսեանի լիազօրութիւնները՝ Հայաստանի նախագահի պաշտօնէն:

Հայաստանի Ազգային ժողովի լրատուականին մէջ հրապարակուած արձանագրութեան մէջ կը կարդային. «Հիմք ընդունելով հանրապետութեան նախագահի հրաժարականի մասին դիմումը եւ առաջնորդուելով Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան 142-րդ յօդուածի եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրէնքի 147-րդ յօդուածի Ա. մասի եւ 2-րդ մասի 2-րդ կէտի պահանջներով՝ դադրած նկատել հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեանի՝ նախագահի լիազօրութիւնները»:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Արդէն տեւական ժամանակ է ինչ օրուայ քաղաքական իշխանութիւնը յանցաւոր հետեւողականութեամբ գաւթում է դատական իշխանութիւնը՝ ձգտելով երկրում վերջնականապէս հաստատել մէկ անձի իշխանութիւն:

Անդրեւոյթ բազմաթիւ ծանր եւ առանձնապէս ծանր յանցագործութիւններ կատարմանը զուգընթաց, վերջինս նաեւ անողորմ է իրաւունքի գերակայութեամբ առաջնորդուող եւ արդար դատաքննութիւն իրականացնող դատաւորներին նկատմամբ:



Իրաւական պետութիւնը ոչնչացնող պետական ահաբեկման այս մթնոլորտում լռութիւն է տիրում մարդու իրաւունքների պաշտպանութեան տեղական եւ միջազգային կազմակերպութիւններում: Սա այն դէպքում, երբ նման դէպքերը պետք է դառնան տեղական եւ միջազգային լայն քննարկումների առարկայ:

Այս վիճակը սպառնում է հայոց պետականութեանը: Այն անթոյլատրելի է:

Ելնելով նշուածից ՀՀ Դաշնակցութեան Հայաստանի Գերագոյն մարմինը՝

Դատապարտում է օրուայ իշխանութիւնների պետականաքանդ այս վարքագիծը:

Պահանջում է Հայաստանի իրաւապահ մարմիններից գերծ մնալ հակաօրինական, իշխանութեան ապօրինի պատուէրներով գործողութիւններ կատարելուց:

Կոչ է անում հայաստանեան քաղաքացիական հասարակութեանը եւ երկրի ապագայով մտահոգուած մեր հայրենակիցներին՝ համախըմբուել եւ ընդդիմանալ Սահմանադրութիւնը ոտնահարող գործողութիւններին:

Ժողովրդավարութեամբ եւ իրաւունքի գերակայութեամբ մտահոգ միջազգային հանրութեան ուշադրութիւն է հրաւիրում օրուայ քաղաքական իշխանութիւնների հակաիրաւական այս վարքագծի վրայ:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ 1 Փետրուար 2022

ԱՏՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ԲՈՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԱՐՅԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՕՐԱԿԱՐԳԻՆ ՎՐԱՅ ԴՐՈՒՄ Է

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի խմբակցութիւններուն նախաձեռնութեամբ օրակարգ դրուած է ատրպէյճանական բռնատիրութեան մասին օրէնքի նախագիծ: Մարդկային զարգացման միջազգային կեդրոնի նախագահ Թեւան Պօղոսեան կը գրէ. «Նոր հեռախօսային կապ հաստատեց Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի նախագահ Արթուր Թովմասեան եւ յայտնեց շատ սպասուած ու լաւ լուր: Յուսամ, որ 16 Փետրուարի նիստին պիտի կատարէ առաջին ընթերցում, իսկ 20 Փետրուարին, նաեւ իր խորհուրդով, ամբողջական պիտի ընդունուի: Արցախի ԱԺ-ի այս նախաձեռնութեան պետք է օժանդակել եւ օգնել, որ տեղեկատուական դաշտին մէջ կարենանք մեր շեշտադրումները ընել: Յուսամ՝ 13 Փետրուարը խորհուրդով եւ Միացում շարժումի 34-րդ տարեդարձով կ'ամրագրուի համայն հայութեան միասնութեան միտումը գործողութիւնները»:



ԱՐՅԱՆԻ ԱԱԾ.«ԱՏՐՊԷՅՃԱՆ ԳՆ ՀՐԱՄԱՐԱԾԻՐ ՆԵՆԳ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ»

Արցախի Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Ծառայութենէն կը տեղեկանանք, որ 2020-ի 44-օրեայ պատերազմը անսկարագրելի արհաւիրք էր Արցախի Հանրապետութեան քաղաքացիներուն համար, ու թէւ 9 Նոյեմբերի 2020-ի եռակողմ յայտարարութենէն վերջ գործուն գիտութեան գործողութիւնները դադրեցան, այդուհանդերձ Ատրպէյճան չէ հրաժարած իր նենգ ծրագիրներէն ու կը շարունակէ Արցախի Հանրապետութեան խաղաղ բնակչութիւնը ահաբեկելու, արցախցիներուն մէջ ծրագրուած խուճապ ձեւաւորելու եւ անկլա պահպանելու ուղղուած քայլերը:



9 Նոյեմբեր 2020-էն վերջ Ատրպէյճանի յատուկ ծառայութիւնները իրենց ողջ ներուժը ուղղած են համացանցային կարելիութիւններու կիրառումով յարձակումներուն ու արցախցիներուն ընկերային ցանցերու վրայ տարբեր դաւադիր գործընթացներու մէջ ներգրաւելու ուղղուած գործողութիւններու կազմակերպումին ու իրագործումին:

Յատկանշական է, որ այդ միջոցներն ու հնարքները պարբերաբար կը փոխուին, կը կատարեալագործուին: Սկիզբը, անոնք հայկական համացանցային տիրոյթէն պատճենահանած են Ստեփանակերտի ու Արցախի Հանրապետութեան հանրաճանաչ այլ վայրերէն տեսարաններ եւ ատրպէյճաներէն գրութիւններու ուղեկցութեամբ վերահրապարակած՝ այդ ձեւով արցախցիներու մօտ փորձելով ձեւաւորել անպաշտպանութեան զգացողութիւն եւ ատրպէյճանցիներու կողմէն Արցախի Հանրապետութեան տարածք ազատօրէն ներթափանցելու տպաւորութիւն: Արցախի Հանրապետութեան ազգային անվտանգութեան ծառայութեան կողմէն այդ տեսանկիւններու կեղծ ու բեմականացուած ըլլալը բացայայտելէն վերջ կատարուած է հանրային գիտակցութեան վրայ ներագրելու մեթոտի փոփոխութիւն եւ նորութիւն:

Ամենատարբեր միջոցներով շահագրգռելու եւ տարբեր պատճառաբանութիւններով համոզելու եղանակով ընկերային ցանցերու արցախցի օգտատէրերէն ձեռք բերուած են Ստեփանակերտի «Վերածնունդի» հրապարակի, «Մենք ենք Մեր Սարերը» յուշարձանի եւ այլ վայրերու լուսանկարներ կամ նոյն վայրերու մէջ կատարուած տեսանկարահանման արդիւնքներ եւ կրկին ատրպէյճաներէն խօսակցութեան ուղեկցութեամբ հրապարակուած: Արցախի Հանրապետութեան Ազգային Անվտանգութեան Ծառայութեան կողմէ այդօրինակ դէպքերը բացայայտելէ եւ անոնց ծագումի աղբիւրները մերկացնելէ վերջ ատրպէյճանական յատուկ ծառայութիւնները կրկին վերափոխած են գործողութիւններու բնոյթը: Այս անգամ որպէս թիրախ սկսած են ընտրուիլ ոչ միայն քաղաքացիական անձեր, այլեւ գիտութեան ծառայողներ, որոնց հետ ընկերային ցանցերու վրայ բացուած կեղծ ու գայթակղիչ էջերուն հետ կապ հաստատուելէն վերջ ձեռք բերուած են անձնական տուեալներ՝ անձնագրի, գիտութեան գրքոյկի լուսանկարներ, անպարկէշտ արտայայտութիւններ պարունակող գրագրութիւն, ստացած մարմնի տարբեր մասերու լուսանկարներ, որմէ ետք անոնք հրապարակելու սպառնալից գործադրումով մեր քաղաքացիները դարձնել սեփական պահանջները բաւարարելու գործիք:

Անձնական տուեալներու եւ պատիւն ու արժանապատուութիւնը նուազացնող տեղեկութիւններու հրապարակման վտանգով շղթայուած անձերէն հետագային փորձ պիտի կատարուի ստանալ Արցախի Հանրապետութեան տարբեր վայրերու լուսանկարներ, գօրամասերու տեղակայման վայրերու, սպառազինութեան մէջ մտնող զենքի ու զինամթերքի տեսակի եւ քանակի մասին տեղեկութիւններ:

## «ՍՓԻՌՔԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՆՅԵՏԱԶԳԵԼԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ Է» ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

*Սփիւռքի մասին խօսելը այսօր տարօրինակ երեւոյթ մը չէ, այլ՝ բնական, որովհետեւ Սփիւռքը տագնապի մէջ է: Ինչո՞ւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Յայրապետը 2022-ն «Սփիւռքի Տարի» հռչակեց: Նման հռչակում կատարելու համար, վստահաբար եւ բնականաբար, Վեհափառ Յայրապետը լուրջ պատճառներ ունէր: Նորին Սրբութեան բնորոշումով, Սփիւռքը սկսած է ծաւալիլ ու տարածուիլ: Յայտարարեալ մեծամասնութիւնը Սփիւռքի մէջ է: Սփիւռքը սկսած է մաշիլ ու գունայթափիլ: Սփիւռքը սկսած է անտարբեր ըլլալ ինքն իր նկատմամբ, յուսախաբ՝ Յայաստանի նկատմամբ, յատկապէս Արցախի պատերազմէն ետք: Երիտասարդութիւնը սկսած է հեռանալ մեր հաւաքական կեանքէն ու կառոյցներէն: Օտարին ներկայութիւնը հայ կեանքին մէջ սկսած է դառնալ զգալի: Այս բոլոր մտահոգութիւններուն եւ Սփիւռքին դիմագրաւած դժուարութիւններուն մասին Արամ Ա. Վեհափառ Յայրապետը անդրադարձաւ Ազդակ-Արարատ-Չարթօնք օրաթերթերուն եւ Կաթողիկոսարանի Cilicia TV-ին հետ ունեցած հարցազրոյցով մը:*



### 1) Վեհափառ Տէր, նախ ինչպէ՞ս կ'արժեւորէք 2021 տարին:

Աշխարհի ժամանակակից պատմութեան մէջ անցնող տարին բնորոշուեցաւ զանազան տագնապներով: Իրականացան ակնարկով յիշեցնող մարդեր միայն. - Բաղաքական իմաստով, հետզհետէ խորացող դիւանագիտական լարուածութիւնը գերապետութիւններուն միջեւ, Ուքրաինայի հարցը, Զիւսիսային Զորային անլոյծ խնդիրը, Իրանի Իսլամական Զանապետութեան եւ Միացեալ Նահանգներու միջեւ հիւլէական հարցին շուրջ տեղի ունեցող բանակցութիւնները կրնան աշխարհը առաջադրուել պարզ-պատեպարմի եւ նոյնիսկ աննախատեսելի վտանգներու: **Վեներաբոյն** տագնապը կը շարունակէ մնալ աւելի քան հրատապ՝ հակառակ պետութիւններու կողմէ կատարուած յանձնարարութիւններուն: **Համաճարակի** նոր ալիքները կը շարունակեն աւեր գործել աշխարհի բոլոր կողմերը, հակառակ նախագահական ազդու միջոցներու կիրառման: **Հայաստանը** տակաւին կ'ապրի յետ-պատերազմէն անորոշ եւ վտանգներով լի վիճակի մէջ: Արդարեւ, այսպէս կոչուած միջանցքներու ու սահմանագծումներու խնդիրը եւ յատկապէս Արցախի ապագան լուրջ մարտահրաւերներու դիմաց դրած է Հայաստանը: Հայաստան-Թուրքիա յարաբերութեանց հարցը նոր հարցականներ կրնայ ստեղծել Հայաստանի ու ողջ հայութեան համար: Անորոշութեան այս խորքին վրայ ներ-Հայաստանեան լարուածութիւնը աւելի կը բարդացնէ Հայաստանին դիմագրաւած ծանր դժուարութիւնները: Բնականաբար, յիշեալ հարցերը համահայկական բնոյթ ունին եւ խորապէս կը մտահոգեն նաեւ Սփիւռքը: **Լիբանանի** ներքին տագնապը կը շարունակուի առաւել թափով: Յատկապէս ընկերատնտեսական տագնապը դարձած է անհանդուրժելի եւ գայն լուծելու եւ նոյնիսկ մեղմացնելու ճիգերը, փաստօրէն, բացակայ են: Արդարեւ, աշխարհին մէջ խաղաղութեան հաստատումը մարդութեան երազը եղած է միշտ: Մնայուն, իրաւ ու ամբողջական խաղաղութիւն կը հաստատուի արդարութեան, փոխադարձ հասկացողութեան, համագործակցութեան ու խաղաղ գոյակցութեան սկզբունքներու վրայ: Այս գծով էական է կրօններու դերը: Կ'աղօթենք, որ Աստուծոյ օրհնութեամբ Նոր Տարին դառնայ աշխարհը խաղաղութեան առաջնորդող տարի:

### 2) Կաթողիկոսութեան առաքելութիւնը համասփիւռքեան է, սակայն Կաթողիկոսարանը Լիբանանի մէջ հաստատուած ըլլալով, վստահաբար երկրէն ներս ստեղծուած տագնապը նաեւ իր բացասական ազդեցութիւնը ունեցաւ Կաթողիկոսութեան գործունեութեան վրայ:

Բնականաբար Կաթողիկոսարանին գործունեութիւնը եւս դիմագրաւեց բազմաթիւ դժուարութիւններ, յատկապէս տնտեսական մարզէն ներս՝ համաճարակի ստեղծած դժուար պայմաններուն, Լիբանանի դրամատուններու գործունեութեան խանգարումին եւ լիբանանեան թղթակցի ահաւոր անկումին հետեւանքով: Սակայն թէ՛ Կաթողիկոսարանի ներքին աշխատանքները իրենց բնականոն ընթացքը շարունակեցին եւ թէ՛ Կաթողիկոսութեան առաքելութիւնը վերանորոգ շեշտով շարունակուեցաւ՝ զանազան բնագաւառներէ ներս: Մեր Սուրբ Աթոռին առաքելութեան մէջ կարեւոր դերակատարութիւն ունեցող միաբանութեան անդամները, Կաթողիկոսարանէն ներս թէ թեմերուն մէջ, իրենց ծառայութիւնը նուիրումով շարունակեցին: Ժողովական կեանքը ընդհանրապէս առցանց անընդմիջաբար շարունակուեցաւ, ինչպէս նաեւ՝ Կաթողիկոսարան-թեմ յարաբերութիւնները: Ներկայ տարուան համար նախատեսած ենք հետեւեալ կարեւոր ծրագիրները. - Արցախի նուիրուած գիտաժողով (9-10 Փետրուար), Միւռնոսիներ (1 Յուլիս), Միաբանական Ընդհանուր Ժողով (4-5 Յուլիս), Ազգային Ընդհ. Ժողով (7-9 Դեկտեմբեր): Ասոնց առընթեր, ներկայ տարուան Կաթողիկո-

սութեան առաքելութեան կիզակետը պիտի դառնայ 2022-ն «Սփիւռքի Տարի» հռչակումը: Այս օրերուն զանազան առիթներով շեշտեցինք, թէ Սփիւռքի վերակազմակերպումը դարձած է անյետաձգելի անհրաժեշտութիւն: Սփիւռքը չի կրնար այլեւս հինգած կառոյցներով, օրակարգերով ու մտածողութեամբ իր կեանքը շարունակել ներկայ համաշխարհայնացած աշխարհին մէջ: Թէ՛ անտարբերութիւնը եւ թէ՛ գոհունակութիւնը Սփիւռքի ներկայ վիճակին նկատմամբ նոյնքան վնասաբեր են: Վերանորոգումը կը սկսի երբ ընդունինք մեր թերութիւնը եւ ըլլանք դժգոհ նախ մեր անձերուն, մեր պարտականութիւններուն եւ ապա մեր շրջապատին նկատմամբ: Սփիւռքի վերակազմակերպումը հաւաքական համոզում, ճիգ ու տեսլական կ'ենթադրէ: Այս գործընթացին պէտք է մասնակից դառնան եկեղեցիէն սկսեալ մեր բոլոր կառոյցները, մտաւորականները ու մասնաւորաբար երիտասարդները: Իւրաքանչիւրը ըսելիք եւ ընելիք պէտք է ունենայ՝ իրատես ոգիով ու գործնական մօտեցումով: Հռչակագրին առընթեր, նաեւ ընդհանուր ուղեգիծ մը դրկած ենք թեմերուն, որպէսզի կարելի ըլլայ գործնապէս արժեւորել «Սփիւռքի Տարի»-ն՝ իր առաջադրանքներով ու մարտահրաւերներով: Զանի մը օր առաջ, Կաթողիկոսարան հրաւիրեցինք շուրջ վաթսուս լիբանանահայ մտաւորականներ եւ ընդհանուր խորհրդակցութիւն մը ունեցանք «Սփիւռքի Տարի»-ին առնչուած նիւթերու ու մտահոգութիւններու շուրջ: Անհրաժեշտ է, որ նման հանդիպումներ տեղի ունենան բոլոր գաղութներէն ներս եւ անոնց յաջորդէ աւելի խորքային ու մասնագիտական մօտեցումով հաւաքներ մեր կեանքի զանազան բնագաւառներուն առնչուած: Մթնոլորտի պատրաստութիւնը ու խորհրդակցութիւնը, տեսակետներու ու մօտեցումներու փոխանակումը էական են վերանորոգման ու վերակազմակերպման գործնական քայլերու դիմելէ առաջ:

### 3) Վեհափառ Տէր, ինչպէս գիտեք, Լիբանանը շատ կենսական միջավայր հանդիսացած է եւ ներկայացուցած կեդրոնական հանգամանք՝ համասփիւռքեան առումով: Լիբանանահայ համայնքը բոլոր առումներով, հակառակ իր դիմագրաւած ծանրագոյն փորձութիւններուն, մի՞շտ աջակցողի, հասնողի, կենսատու գաղութի գործառնութիւնը իրականացուցած է: Այսօր, սակայն, լիբանանահայը ի՞նչ կարիքը ունի իր սփիւռքահայ հայրենակիցներու օգնութեան: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մեծագումար օժանդակութիւններ կը տրամադրէ՝ սնունդի, ընկերային աջակցութիւններու, նիւթական յատկացումներու եւ հիւանդանոցային բուժման: Կը խնդրենք, որ այս մասին անդրադառնաք ընդհանուր գիծերը ընդգծելով:

Շուրջ երկու տարիէ ի վեր Լիբանանը ընկղմած է խոր տագնապի անդունդին մէջ: Տագնապ մը, գոր ժողովուրդը ամէն վայրկեան կ'ապրի: Տագնապ մը, որուն հետեւանքները կրնան ըլլալ աննախատեսելի՝ ներքին ու արտաքին իմաստով: Այս մասին լայնօրէն անդրադարձած ենք Վատիկանի մէջ հոգեւոր պետերու ժողովին, Ֆրանսիս Պապին ներկայութեան, վերջերս Լիբանան ժամանած Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Ընդհանուր Զարտուղարին, ինչպէս նաեւ զանազան հրապարակային առիթներով: Այստեղ կ'ուզեց հակիրճ կերպով անդրադառնալ կարգ մը հիմնական կետերու. - ա) Լիբանանի ներկայ տագնապին ստեղծման պատասխանատուները առաւելաբար պետական վարչամեքենայի վերնախաւի պատասխանատուներն են, որոնք վերջին երեսուն տարիներուն իրենց անփոյթ, անձնակեդրոն եւ ոչ-համարատու գործունեութեամբ երկիրը փտածութեան ու անխիշխանութեան տիրմին մէջ խրեցին: բ) Ներկայ տագնապը կը ստիպէ, որ երկրին պետական-քաղաքական կառոյցէն, ինչպէս նաեւ զանազան մարդերէն ու կառոյցներէն ներս հիմնական բարեկարգութիւններ կատարուին, բնականաբար պահելով համայնքային դրութիւնը: Սա թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ միջազգային համայնքին սպասումն է եւ երկիրը տագնապէն դուրս բերելու կարեւոր միջոցներէն մէկը: գ) Լիբանանի հայ համայնքը երկրին պետական համակարգին մաս կը կազմէ՝ իր պարտաւորութիւններով ու իրաւունքներով: Երկրէն ներս տեղի ունեցող գաղթացումներու լոյսին տակ անհրաժեշտ է, որ համայնքի գաւառները համախմբուին մեր կառոյցներուն շուրջ, մասնակից դառնան մեր հաւաքական կեանքին եւ մեր քաղաքական ու համայնքային պատասխանատուները աջալուրջ ըլլան, որպէսզի կարելի ըլլայ պաշտպանել մեր իրաւունքները, որպէս Լիբանանի եօթը գլխաւոր համայնքներէն մէկը: դ) Ինչպէս բոլոր համայնքները, նաեւ մեր համայնքի գաւառները կը դիմագրաւեն ընկերատնտեսական ծանր դժուարութիւններ: Աննախընթաց սղածը, լիբանանեան թղթակցին ահաւոր անկումը, անգործութիւնը, դեղորայքի պակասը եւ այլ բազմաթիւ դժուարութիւններ կը շարունակեն իրենց անմիջական անդրադարձ ունենալ ժողովուրդի առօրեայ կեանքին վրայ: Մեր կարելիութեան սահմաններէն ներս օգնեցինք մեր կառոյցներուն եւ ընտանիքներուն եւ տակաւին պիտի շարունակենք: Սա մեր եկեղեցւոյ ծառայական կոչումին մաս կը կազմէ: Այս ծիրէն ներս մեզի օգնեցին մեր թեմերը՝ յատկապէս Զիւսիսային Ամերիկայի թեմերը եւ նաեւ անհատ ազգայիններ: Յայտնենք նաեւ, որ մեր կառոյցները եւս իրենց առաւելագոյնը կատարեցին օգտակար ըլլալու մեր գաւառներուն: Բարձր կը գնահատենք բոլորին կատարած գործը: Այս առիթով կ'ուզեց յատուկ կերպով յիշել Չուիցերիայէն ազգային բարերար Տէր եւ Տիկին Ալեքս Պեգիբեանը: Այս գոյգին կողմէ կատարուող օժանդակութիւնը, մասնաւորաբար մարդասիրական ու առողջապահական բնագաւառներէն ներս, արժանի է մեր բոլորի բարձր գնահատանքին ու խոր յարգանքին:

### 4) Վեհափառ Տէր, Դուր 2022 տարին հռչակեցիք «Սփիւռքի Տարի»: Ինչպէ՞ս կը բացատրէք այս հրամայականը, «Սփիւռքի Տարի» յայտարարելու այս անհրաժեշտութիւնը:



Հայաստան-Սփիւռք վերջին խորհրդածողովին (Երեւան, 18-20 Սեպտեմբեր 2017), Մեր խօսքին մէջ յատուկ կարեւորութեամբ շեշտեցինք, թէ «Հայաստանը կը պարպուի եւ Սփիւռքը կը մաշի»: Սա փաստացի իրողութիւն մըն էր եւ է այսօր՝ աւելիով: Իրաւունք չունինք այս տխուր ու վտանգալից իրողութեան դիմաց լուռ մնալ: Արտագաղթը Հայաստանէն դժբախտաբար մնայուն ընթացք է, առաւել կամ նուազ չափով: Նոյնպէս՝ Սփիւռքին հայօրէն գունաթափումը ու մաշումը: Երբ փորձենք խորաթափանց ակնարկ մը նետել գաղութներու ներքին կեանքի հոլովոյթին, յստակօրէն կը տեսնենք նահանջի ու մաշումի նշանները: Հետեւաբար, Սփիւռքի վերակազմակերպումը անյետաձգելի հրամայական է: Վերակազմակերպում ըսելով էապէս կը հասկնանք ներկայ կացութեան արժեւորում, Սփիւռքը դիմագրաւող մտահոգութիւններու, դժուարութիւններու ու մարտահրաւերներու քննարկում, առաջնահերթութիւններու ճշդում, կառոյցներու կեանքին ու գործունէութեան վերատեսութիւն եւ ապա վերականգնումի, վերանորոգումի ու վերակազմակերպումի գործընթացի ճշդում: Բնականաբար, սա դիրքի ծրագիր մը չէ եւ ոչ ալ կարճ ժամանակամիջոցի ընթացքի իրագործուելի աշխատանք. այլ՝ համապարփակ ու իրապաշտ մօտեցումով ծրագրուելիք ու հանգրուանային կերպով գործադրելի երկարատեւ գործընթաց:

**5) Սուրբ Ծննդեան Պատարագի Զեր պատգամին մէջ յայտարարեցիք, որ Սփիւռքի իրավիճակը քառային է: Երեւանի մէջ, 2017-ի համահայկական համագումարին բնութագրելով Սփիւռքի կացութիւնը, ահագանգ հնչեցուցիք «Սփիւռքը կը մաշի»: «Յո՞ւրթաս Սփիւռք» հարցադրումը կարծեք այժմեական հնչեղութիւն ստացած է: «Սփիւռքի Տարի» յայտարարելով ի՞նչ աշխատանքային հիմնական ուղղութիւններ կը թելադրէք:**

Ինչպէս քիչ առաջ շեշտեցինք, Սփիւռքի վերակազմակերպումը այլեւս դարձած է անխուսափելի: Անցնող տարուան ընթացքին, այս գծով յօդուածներ գրուեցան, արտայայտութիւններ կատարուեցան, նշումներ եղան: Հետեւաբար, «Սփիւռքի Տարի» հռչակումը պարագայական երեւոյթ մը չէ. ան մէկ կողմէն ներկայ իրողութեան նկատմամբ գործնական քայլ մըն է եւ միւս կողմէ՝ մտաւորականներու ու ղեկավարներու կողմէ այս ուղղութեամբ արտայայտուած մտահոգութիւններուն եւ սպասումներուն ընդառաջումը: Սփիւռքի վերակազմակերպման գծով մեր մօտեցումը զգացական, միակողմանի ու ինքնանպատակ պէտք չէ ըլլայ: Կ'ուզենք կարեւորութեամբ ընդգծել այս երեք բառերը. - Հարկ է ըլլալ **ոչ-զգացական**, որովհետեւ ինչպէս նշեցինք, Սփիւռքը փաստօրէն նահանջի մէջ է: Անհրաժեշտ է իրապաշտ եւ համապատասխան մօտեցում ճշդել ներկայ կացութեան նկատմամբ: Հարկ է ըլլալ **ոչ-միակողմանի**, որովհետեւ Սփիւռքը համահայկական կեանքէն կտրուած ու լուսանցքայնացած իրականութիւն մը չէ, այլ անքակտելի մասը՝ մէկ ու ամբողջական հայութեան: Հետեւաբար, մեր արժեւորումները, վերլուծումները ու առնելիք քայլերը պէտք համահայկական շրջագծէն ներս կատարուին: Վերջապէս, հարկ է ըլլալ **ոչ-ինքնանպատակ**, որովհետեւ Սփիւռքի վերակազմակերպումը պէտք է կատարուի ի խնդիր Հայաստանի ու Արցախի հօգոյցով: Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիութիւնը լոգունգ չէ, պէտք չէ դառնայ, այլ մեր ազգի գաղափարախօսութեան խորքը, հենքը եւ նպատակը: Հօգօր, կազմակերպ ու կենսունակ Սփիւռք կ'ենթադրէ նոյնպէս հօգօր, կազմակերպ ու կենսունակ Հայաստան եւ Արցախ: «Սփիւռքի Տարի» հռչակագրին մէջ ընդհանուր գծերով պարզած ենք այն հիմնական կետերը, մարգերը ու երեւոյթները, որոնք կը կարօտին լուրջ քննարկման: Օրինակ, արեւմտահայերէնի նահանջը, համայնքային կառոյցներու գործունէութեան օրակարգներու ու կանոնադրութեան վերանայումը, երիտասարդներուն ու երիտասարդուհիներուն գործօն մասնակցութիւնը հայ կեանքին մէջ, մեր ներուժին ճիշդ ու ամբողջական օգտագործումը, ներ-գաղութային եւ համա-սփիւռքեան գործակցութեան ամրապնդումը եւ գործունէութեան ներդաշնակումը եւ այլ նմանօրինակ հիմնական հարցեր: Այս աշխատանքը անհրաժեշտ է, որ ըլլայ հաւաքական կերպով ու մասնագիտական մօտեցումով եւ նկատի ունենալով ներկայ աշխարհի յարափոփոխ պայմանները, նոր իրականութիւնները, ինչպէս նաեւ գաղութներու ներքին դրուածքն ու շրջապատը: Կը խօսինք բազմատարած ու բազմերես աշխատանքի մասին, որուն մասնակից պէտք է ըլլան բոլոր կառոյցները, պատասխանատուները եւ յատկապէս մեր երիտասարդերիտասարդուհիները, որոնք կոչուած են նոր շունչ տալու շնչասպար ըլլալու վտանգին ենթակայ մեր կառոյցներուն եւ նոր արին ներարկելու լծացման վտանգին ենթակայ մեր գաղութներուն: Այս հաստատումները թերեւս ոմանց ակննքին տարօրինակ թուին, սակայն կատարուած նշումները դժբախտաբար իրականութեան կը համապատասխանեն: Հետեւաբար, եկեղեցիէն սկսեալ մինչեւ մեր բոլոր կառոյցները քաջութիւնը, իմաստութիւնը եւ յանձնառութիւնը պէտք է ունենան վերանորոգուելու ու վերանորոգելու, վերակազմակերպուելու ու վերակազմակերպուելու մեր հայեցակէտերը, մեր համոզումները, մեր կառոյցները, մեր համայնքները եւ վերջապէս մեր ազգը, այնպիսի արժեքափոխումով, որոնք համահունչ են մեր գերագոյն իրաւունքն ու արժեքներուն: Այլապէս, համաշխարհայնացած ներկայ աշխարհին մէջ պիտի մնանք առանձին միջազգային համայնքի լուսանցքի վրայ: Ըլլա՞նք իրատես, ոչ յոռետես: Ըլլա՞նք լայնահայեաց, ոչ ինքնակեդրոն: Ըլլա՞նք ներկային մէջ անցեալը եւ ներկան իրար շաղախող, ոչ ներկային մէջ անցեալը ապրող: Ըլլա՞նք եղածը բարելաւող, ոչ եղածը պահող: Այս է վեր-

ականգման ու վերակազմակերպման ճիշդ ճամբան:

**6) Վեհափառ Տէր, բարոյ է Սփիւռքի սահմանումը. ունինք դասական Սփիւռքը եւ նոր բայց անկազմակերպ, ցիր ու ցան Սփիւռքը: Այս ներսփիւռքեան հատուածներուն միջեւ աշխատանքը ինչպէ՞ս պիտի համակարգուի:**

Սփիւռքը խառնաշփոթ վիճակ մը կը պարզէ՝ իր խայտաբղետ, գոյնզգոյն, աններդաշնակ ու ցիրուցան պատկերով: Չմոռնանք, որ ներկայ Սփիւռքը յառաջացած է երեք սփիւռքներէ. - Տեղասպանութենէն ճողոպրած հայորդիներէ գոյաւորուած սփիւռքը, որ հիմքը կը կազմէ ներկայ Սփիւռքին: Սովետական Միութենէն հեռացած հայորդիներէ կազմուած սփիւռքը եւ Հայաստանէն արտագաղթած հայորդիներէ գոյացած սփիւռքը: Երեք սփիւռքները պատմական տարբեր հոլովոյթի ենթակայ ըլլալով, տարբեր ասանդութիւններ, մօտեցումներ եւ փորձառութիւն ունին: Հասարակաց գիծերու առնչութեամբ, տարբերութիւնները ակնայտ են անոնց միջեւ՝ նոյնիսկ նոյն գաղութին մէջ: Հայաստանի վերանկախացումէն աւելի քան 30 տարիներ անցած են, եւ փաստօրէն՝ երեք սփիւռքներու ներդաշնակումը կարելի չէ եղած: Սփիւռքի վերակազմակերպումի աշխատանքներու ընթացքին յատուկ կարեւորութիւն հարկ է տրուի այս երեւոյթին: Մեր հռչակագրին մէջ առաջարկած ենք, որ աշխատանքի մեքանիզմներ ճշդուին ընդհանրացումներէ ու պարագայական քայլերէ խուսափելու համար, ինչպէս նաեւ՝ յստակ ժամանակացոյց: Իւրաքանչիւր կառոյց ի՞նչ պէտք է կատարէ իր ներքին վերակազմակերպումը եւ ապա տուեալ գաղութէն ներս գործող կառոյցներու միջեւ կատարուած աշխատանքներու համադրում ու ներդաշնակում հարկ է տեղի ունենայ՝ ճշդելով հասարակաց սկզբունքներ ու նպատակներ եւ պահելով իւրաքանչիւրին իւրայատկութիւնը: Դարձեալ կը կրկնենք, սա բարոյ, դժուար եւ զգայուն աշխատանք է: Ամէն բանէ առաջ պատասխանատուներ համոզուած պէտք է ըլլան, թէ իրենց ղեկավարութեան յանձնուած կառոյցը հրամայական կարիքը ունի վերարժեւորման, վերանորոգման ու վերակազմակերպման: Այս համոզումը պէտք է դառնայ միջ ու ժը վերակազմակերպումի աշխատանքներուն: Մթնոլորտի պատրաստութիւնը եւս կը նկատենք յոյժ կարեւոր: Սպասելի է, որ յառաջիկայ ամիսներուն այս գծով յօդուածներ գրուին, դասախօսութիւններ կազմակերպուին, քննարկումներ ու սեմինարներ տեղի ունենան, որպէսզի մեր թեմերը, կառոյցներն ու համայնքները խորապէս համոզուին, որ Սփիւռքի վերակազմակերպումն ու վերակենսաւորումը այլեւս դարձած են անյետաձգելի:

**7) Իսկ պետութեան դերը ի՞նչ է: Նախապէս կը գումարուէին համահայկական համագումարներ Երեւանի մէջ, կը գործէր Սփիւռքի նախարարութիւնը, կային մասնագիտական համախմբումներ, մշակուած էր համահայկական հռչակագիր, աշխատանքներու ձեռնարկուած էին Համագալին խորհուրդի կազմութեան համար, ուր ներկայացուած պիտի ըլլար Սփիւռքը՝ իր եկեղեցիներով, կուսակցութիւններով եւ միութիւններով: Պետութեան դերի անհրաժեշտութիւնը ինչպէ՞ս կը մեկնաբանէք:**

Անհրաժեշտ է միշտ յիշեցնել, թէ Սփիւռքը ինքնանպատակ չէ. ինչ որ Սփիւռքին կողմէ կը կատարուի, Հայաստանը, մեր ժողովուրդի պահանջատիրութիւնը եւ մեր ազգի գերագոյն իտեալները պէտք է դառնան կիզակետ Սփիւռքի կեանքին, մտածողութեան ու գործին: Բնականաբար, Սփիւռքի վերակազմակերպումը պէտք է կատարուի Սփիւռքին կողմէ: Սակայն Հայաստանը չի կրնար անտարբեր ըլլալ եւ սոսկ դիտողի դերին մէջ մնալ: Անհրաժեշտութեան պարագային հարկ է նաեւ Հայաստանի պետութեան եւ փորձագետներուն նեցուկը ունենալ: Եւ ճիշդ ատոր համար «Սփիւռքի Տարի»-ի հռչակագրէն յատուկ նամակներով օրինակներ դրկեցինք Հայաստանի Նախագահ Արմէն Սարգսեանին, Վարչապետ Նիկոլ Փաշինեանին, Արցախի Նախագահ Արայիկ Յարութիւնեանին, Հայաստանի Ազգ. Ժողովի Նախագահ Ալէն Սիմոնեանին, Արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանին, ինչպէս նաեւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեանին, Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Սահակ Արք. Մաշալեանին, հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Հոգեւոր Պետ Ամենապատիւ եւ Գերեթանիկ Տ. Ռաֆայէլ-Պետրոս ԻԱ. Հոգեւոր Տիրոջ եւ Միջին Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Նախագահ Վերապատուելի Սկրտիչ Գարակէօզեանին՝ իրաւորելով, որ իրենց տեսակետները յայտնեն եւ մասնակցութիւն բերեն Սփիւռքի վերակազմակերպման աշխատանքներուն: Սփիւռքի վերակազմակերպումը համասփիւռքեան ճիգով պէտք է ըլլայ. սակայն, ինչպէս ընդգծեցինք, համասփիւռքեան ծրագրումը, ճիգը, մտածողութիւնն ու մօտեցումը հարկ է որ դիտուին ու իրագործուին համահայկական շրջագծէն ներս: Մեր գաղափարն անհրաժեշտ է իրականացնելու մէջ կարեւորութեամբ անդրադարձած ենք համահայկական մտածողութեան մշակման ու գործակցութեան զարգացման: Յարո՞ այս ուղղութեամբ անհրաժեշտ քայլերու չենք կրցած դիմել եւ ոչ ալ խորքային մօտեցումով յիշեալ նիւթը քննարկած: Փոքր ազգ ենք. իրաւունք ունինք Հայաստանը ձգելու իր վիճակին, Արցախը՝ իր վիճակին եւ Սփիւռքը՝ իր վիճակին: Առանձին գործելը մեզ իրարմէ պիտի հեռացնէ: Մենք զմեզ իրարու մօտեցնող օղակներու ամրացման կարիքը ունինք: Միութիւն չի նշանակեր միաձեւութիւն, այլ՝ մէկ ամբողջութեան ամրացում եւ տարբերութիւններու ներդաշնակում: Ահա թէ ինչու համասփիւռքեան մտածողութեան մշակումը ու գործակցութեան մեքանիզմներու զարգացումը, ի խընդիր համահայկական մտածողութեան մշակման ու գործակցութեան ամրապնդման, կը նկատենք առաջնահերթ:

(Շար. 1)

ԱԿՆԱԿ

«ՈՂՈՒ ՍՈՎ»-Ը ՊԻՏԻ ԿԱՍԵՑՈՒԻ...

Ս. Մահտերճեան

Արդեօք բանաստեղծը Հայաստանի ու հայութեան այսօրուան դժբախտ իրականութիւնները ի մտի ունէր, երբ կ'ահագանգէր, թէ պիտի ըլլայ «ոգու սով»:

Բայց ահա, Հայաստանի մէջ թէ Արտերկրի տարածքին, հայութեան ժառանգութեանց եւ իրաւունքներուն պաշտպանութեան նախանձախնդիր, հետամուտ, անոնց համար պայքարող, արիւն թափող հայեր, վիթխարի արդիւնքներ ձեռք բերած սերունդներ տարօրինակ ու տրամաբանութիւն չընդունող՝ այլանդակ առաքելութեան մը լծուած են, կը փորձեն իրենց նման հայերու ցոյց տալ, անցեալէն ու երեկէն եկած փաստերով ցոյց տալ, թէ թուրքին ու ազերիին հետ բարեկամութեան ու գործակցութեան էջը բանալու համար, կան դիզուած պարտամուրհակներ, որոնք հատուցման կը սպասեն, անոնց տըրն է մեր ամբողջ ժողովուրդը, եւ ո՛չ միայն սփիւռքահայերը...:



Հարցը հոն է, որ նման անվիճելի, աղաղակող պահանջներ արծարծողներն են, որ ձեռով մը մեղադրանքի թիրախ են վերջին շրջանին: Հայաստանի մէջ թէ սփիւռքեան երկինքներու տակ, սկսած է արագօրէն հող շահիլ այն «արդի մտածողութիւնը», թէ թուրքին ու ազերիին հետ չենք կրնար առյաւետ թշնամի մնալ, պետք է որոշ դառնութիւններ մոռնանք, քաղաքական աշխարհը կը հարկադրէ, որ խօսակցելով, բանակցելով եւ հարգողակցութիւններ ստեղծելով է, որ կը յաղթահարենք անցեալէն կուտակուած դառնութիւնները, դիմաւորել փայլուն ապագայ մը (Արցախն ու Հայաստանէն որոշ հողեր տալն իսկ ներառուած են այս տրամաբանութեան մէջ):

Նման «քաղաքականութիւն» կը հիմնաւորուի այն (ան)տրամաբանութեան վրայ, թէ աշխարհի մէջ եղած են դարաւոր թշնամանքով տարուած երկիրներ եւ ժողովուրդներ, որոնք օր մը բռնած են բարեկամութեան թելերը եւ հիմա դարձած են գործակից-բարեկամ: Մեր՝ հայութեան ու մեր հայրենիքին դիտանկիւնէն, սա ի սկզբանէ անանկ փիլիսոփայութիւն է, ո՛չ իսկ՝ մեկնակէտ, որովհետեւ մեր ու մեր դարաւոր թշնամիներուն միջեւ «յարաբերութիւնները» նման չեն որեւէ այլ օրինակի:

Խօսինք պարզ բառերով. ինչպէ՞ս կարելի է մոռնալ աղաղակող ու շարունակուող իրականութիւնները, որոնք կը կոչուին երկարատեւ հալածանքի եւ խտրական վարմունք, Յեղասպանութիւն, մշակութային ժառանգութեան փճացում ու հողերու բռնագրաւում (անցեալին ու երեկ), փոկրոմ, հայկական բանակն ու պետական ներկայացուցիչներ նուաստացնող յայտարարութիւններ, հայութեան դէմ ատելութեան ՊԵՏԱԿԱՆ քաղաքականութիւն, ուսումնական անթաքցող ծրագիրներ, Հայաստանն ու Արցախը ամբողջութեամբ քարտեզէն վերցնելու դիտաւորութիւն եւ անոնց հասցնող քայլեր, եւ, այս բոլորին դիմաց՝ կոյր ձեւանալ, ժողովուրդդ ալ յորդորել՝ որ կոյր ձեւանայ եւ տարուի «տնտեսական բարգաւաճում պիտի ունենանք»-ի ստապատիր քարոզչութեամբ (թէ քանի մը հոգի շահելու հաւանականութիւն ունի, հայրենիքն ու ազգը «քանի մը անհատ» չեն):

Ամենէն ողբալիս այն է, որ մինչ անցեալ տասնամեակներուն հայութեան ճիգն ու քաղաքական աշխատանքը նպատակ ունէր աշխարհը համոզելու, թէ Յեղասպանութիւնը կարելի չէ մոռնալ («կը յիշեմ ու կը պահանջեմ», «պետք չէ կրկնուի» երեկ էին), պետք է Թուրքիոյ պետութիւնը արդար հատուցումներ կատարէ հայութեան կրած՝ մարդկային, հողային, նիւթական եւ մշակութային կորուստներուն դիմաց, ահա հայը ստիպուած կ'ըլլայ իր ճիգերէն մաս մը մսխելու՝ իր հա՛յ հայրենակիցին բացատրելու, թէ ի՞նչ ըսել է Հայ Դատ, ամբողջական Հայ Դատ, ինչո՞ւ չենք կրնար անտեսել մեր բացայայտ իրաւունքները եւ անոնց վրայէն ցատկելով՝ տարուիլ անտրամաբանական պատրանքներով:

Հայաստանի այսօրուան իշխանաւորներուն «տրամաբանութիւնը», խորքին մէջ, բանիւ եւ գործով ժխտումն է բոլոր այն արժէքներուն եւ քաղաքական ժառանգութիւններուն, որոնք կը կոչուին հաւատարմութիւնը («Եթէ կ'ուզէք ազգ ու հայրենիք պահել, պատրաստ եղէք մեռնելու անոնց համար»), Խրիմեան Հայրիկ (Երկաթե Շերտի եւ մասամբ Լորին), ազգային-յեղափոխական կուսակցութիւններ ու կազմակերպութիւններ, Փետայական շարժում, ցեղասպանին դէմ ծառայող Զեդեանուհի Զեդեանուհի (ո՛չ միայն Սարգսյան պատերազմի, անկախ պետութեան հաստատում եւ ամրագրում (1918-ին եւ 1991-ին), Արցախեան հերոսամարտ եւ Արցախի ազատագրում, Հայաստանի միացում: «Արցախը Ատրպէյճանի կազմէն դուրս չէ եղած» ու նման յերիւրանքներով, իրենց իսկ հռչակած՝ «Արցախը Հայաստանն է ու վերջ»-ը ժխտող հայախոս պետական այրերը մասնաւորաբար 44-օրեայ

Թուրքիոյ նուրջ

ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՎԱԵՐԱՅՈՒՅԱԾ Է ԹՈՒՐԵՒՈՅ ՇԵՏ ԴԱՇՆԱԿՅԱՅԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ «ՇՈՒՇԻԻ ՀՈՂԱԿԱԳԻՐԸ»

Ատրպէյճանի խորհրդարանը երեքշաբթի, 1 Փետրուարին կայացած լիագումար նիստին ընթացքին հաւանութիւն տուած է Թուրքիոյ հետ դաշնակցային յարաբերութիւններու մասին, այսպէս կոչուած՝ «Շուշիի հռչակագիրին»:

Յիշեցնենք, որ բռնագրաւուած Շուշիի մէջ կնքուած թուրք-ատրպէյճանական հռչակագիրը ստորագրուած էր 15 Յունիս 2021-ին, Ատրպէյճանի եւ Թուրքիոյ նախագահներ Իլհամ Ալիեւի եւ Ռեճեպ Թայիպ Էրտողանի կողմէ:

Ատրպէյճան եւ Թուրքիա, հռչակագիրին համաձայն, պայմանաւորուած են ՄԱԿ-ի կանոնադրութեան հիման վրայ գիտութեան փոխադարձ օգնութիւն ցուցաբերել կողմերէն մեկուն անկախութեան, ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան սպառնացող վտանգներուն եւ սպառնալիքներուն պարագային:



Հռչակագիրին համաձայն, եթէ նման վտանգներ յառաջանան, Պաքու եւ Անգարա միատեղ խորհրդակցութիւններ կը կատարեն, հանդէս կու գան այդ վտանգներն ու սպառնալիքները վերացնելու նախաձեռնութիւններով եւ փոխադարձ օգնութիւն կը ցուցաբերեն իրարու: Միաժամանակ, անյապաղ քննարկումներու եւ միատեղ գործողութիւններու միջոցով կ'որոշեն օգնութեան ծաւալն ու ձեւը, իսկ երկու երկիրներու զինեալ ուժերը կ'իրականացնեն անհրաժեշտ համակարգումը:

Բացի այս բոլորէն՝ հռչակագիրին մէջ տեղ գտած կէտի մը համաձայն, Պաքու եւ Անգարա կը շարունակեն իրենց միատեղ ջանքերը՝ երկու երկիրներու զինեալ ուժերը ժամանակակից պահանջներուն համապատասխան արդիականացնելու համար:

Հռչակագիրին մէկ այլ հակահայկական կէտով կը նշուի, որ Ատրպէյճան եւ Թուրքիա «կ'աջակցին առանձին երկիրներու արխիւներու բացմանը եւ պատմաբաններու կողմէ Օսմանեան կայսրութեան մէջ 1915-ի դէպքերուն հետաքննութեան»:

պատերազմէն ասդին, լծուած են «խաղաղութեան դարաշրջան պիտի բանակց» եւ «ժողովուրդէն երկաթե լիագործութիւն ունինք»-ի խեղաթիւրող քարոզչութեան, գլխիվայր շրջելով մեր ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԸ ու անոր բնական ընթացքը, «վերասահմանելով» մեր աշխարհագրութիւնը: Նման քարոզչութիւն անվաղորդայն է, մեր սայլը աւելի՛ եւս կը մխրճէ փոթորկող աշխարհի տիղմին մէջ, շահ չխոստանալէ աւելի՝ ահաւոր վնասներ եւ վտանգներ կը խոստանայ, համազօր է սուղ ճիգերու մսխումի:

Չարունակենք: Այո՛, հասած ենք «ոգու սով»ի դարաշրջանը, որոշ գանգուածներու «մտածելակերպին» մէջ սկսած է տարածք գտնել այն, որ «պետք չէ ընդմիջտ թշնամանքի պատճառներով տարուիլ», «խաղաղութեան շրջանը բանակց առանց նախապայմանի», միևնույն ժամանակ սեղանին դիմաց նստելու պատրաստուող լոկ ձեւակաւորէն նախապայմաններ չի դնէր, միևնույն արդէն իսկ կիրարակման ճամբու մէջ դրած է իր նախապայմանները եւ այդ նպատակին լծած է... Երեւանի վարիչները, որոնք, դժբախտաբար, յաշտ աշխարհին կը ներկայանան իբրեւ երկրին ու ժողովուրդին ներկայացուցիչները: Անոնց «նորաբաց ուղի», առանց բառերը գործածելու, կը յայտարարէ, թէ հայութեան ու հայրենիքին, հողային, մարդկային եւ այլ իրաւունքներուն պաշտպան իրերայաջորդ սերունդները, առաջնորդները, ճահվիրաները (բոլորն ալ «հիներ») ցնորամիտներ էին, մեր ժողովուրդը առաջնորդած են սխալ, ցնորական ճամբու, մե՛նք թշնամացած ենք թուրքին ու ազերիին հետ, մե՛նք անիրաւութիւն ըրած ենք անոնց դէմ, ուրեմն, մեր բանակը այսուհետեւ պիտի չըլլայ յարձակող (իսկ այդ ե՞րբ էր, որ մենք եղած ենք այլապէս ցանկալի նախապայմաններ...): Արայիկներ, Ռուբինեաններ, Միրզոյեաններ եւ դեմ՝ բազմատասնեակ այլանդակ «մարգարէներ», վարչապետին ճիպտին շարժումներուն անսալով, կը փորձեն այս մտածողութեամբ համակել ազգն ու աշխարհասփիւռ հայութիւնը:

«Ոգու սով»ը հասած է, ինչպէս ենք անոր ստեղծած յորձանուտին մէջ, սակայն անկկա չի կրնար դառնալ մնայուն «զգեստ»: Սարգսյան պատերազմի առաջ ու Արցախեան ազատամարտի բազում հանգրուաններէն անցած մեր ջահը շուտով պիտի բոցավառի վերստին, պիտի լուսաւորէ մեր ժողովուրդին միտքերը, պիտի փարատէ մշուշապատ աչքերն ու ուղեղները, որովհետեւ «հիներէն» մէկը այլ ահագանգ մը ինչեցուցած է. «Այսքան չարիք թէ մոռնան մեր որդիք...»: Այդ անժամանցելի ահագանգը անպայման որ պիտի համակէ ու հայութեան դաշտը մաքրագործելու Գործին մէջ պիտի ներգրաւէ երիտասարդութիւնը, ո՛րչ հայութիւնը, մեր Պատմութիւնը կերտող սերունդներուն հաւատարիմ ժառանգորդները:



# ՌՎ ՈՒՆԻ «ՄԱՆԴԱՏ» ԱԶԳԱՅԻՆ ԱՂԵՏԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ

Կարո Արմենյան

Արդեն վաղուց եկած է ժամանակը մեր պետական երեսամեայ փորձառության վիճակագրյոց մօտեն քննելու եւ անկեղծ ու խստապահանջ – անկեղծ ու անխնայ – գնահատական տալու մեր ազգային իրականության:

Այս մեկը կենսական նշանակություն ունի այսօր, քանի որ մենք ձախողված ենք որպես պետականություն: Մենք եղած ենք անձեռնհաս՝ մեր երկրի ներքին եւ արտաքին սպառնալիքները դիմագրավելու գործին մեջ: Մենք եղած ենք անիրագ եկ՝ մեզ շրջապատող թշնամիի բնույթին, կարողականություններուն, իսկական դիտաւորություններուն եւ տարածաշրջանային ռազմավարության: Մենք ապրած ենք բոլորովին անբաւարար տեղեկոյթով մեր «դաշնակից»ներու տարածաշրջանային ռազմավարության մասին: Մենք եղած ենք ընդհանրապես մակերեսային եւ տգետ՝ աշխարհակարգի էութեան կապակցութեամբ: Մենք չենք եղած դերակատար աշխարհակարգի մեզի բաժին ինկած ոլորտին տիրութիւն ընելու գործին մեջ: Չայն տիրականօրէն կառավարելու մեր պատմական պարտաւորութեան մեջ:



Ես կը խնդրեմ սխալ չհասկնալ վերոյիշեալ դիտարկումներու էութիւնը: Մեր երկիրը ունեցած է եւ ունի փայլուն մասնագետներ քաղաքագիտութեան ոլորտին մեջ: Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան եւ Արեւելագիտութեան գոյգ հիմնարկները եւ մեր համալսարաններու համապատասխան բաժանմունքները – իրենց բոլոր բացերով հանդերձ – քաղաքական գրագիտութեան անզուգական օրրաններ են: Հայ քաղաքական միտքը առհասարակ կը գործէ ժամանակի ոգիին եւ հրամայականներուն համապատասխանող տեսլականով եւ զգայնութիւններով: Մասնագիտական մտածողութիւնը չէ, որ բացակայ եղած է մեր կեանքէն:

Ըստ իս, շան գլուխը թաղուած է մեր երկրի քաղաքական գործընթացին մեջ: Ինչպէս թերաճ երկիրներու պարագային, ճակատագրական վիճակը հետեւողականօրէն կը բաժնէ մեր երկրի քաղաքական միտքը երկրի ղեկավար գործընթացներէն: Զաղաքական մտքի բանավեճը եւ անկէ բխող իմաստութիւնը շատ տարտամօրէն եւ պատահականօրէն միայն կը դրսեւորուի քաղաքական գործիչներու մտածողութեան մեջ: Փաստը այն է, որ միտքը եւ գործը լայն չափերով խզուած են իրարմէ: Անոնք նոյնիսկ չեն սիրեր զիրար: Անոնք դժուարաւ կը հանդիպին իրարու: Անոնք վատ: Երկրի ղեկավար վերնախաւը կը մերժէ քաղաքական միտքը ընդգրկել իր կեանքին մեջ: Ան խորթ է քաղաքական մտքի զարգացման տարերայնութիւն (dynamics): Ան շատ հեռու է քաղաքական մտքի բառապաշարն ու խօսույթը հասկնալէ, քանի որ ան չէ աճած քաղաքական մտքին հետ միասին:

Այս պարագային, մեզ պետք է շահագրգռել,

թէ իսկապէս ի՞նչ տեղի ունեցած է եւ տեղի կ'ունենայ երկրի կառավարման որոշողական (decision-making) ոլորտներուն մեջ: Ովքե՞ր են, որ կը տիրապետեն սանձերուն:

Յիշեցնե՛մ: Դեռ վերջերս, Վարչապետ Փաշինեան ՀՀ Ազգային Ժողովի ամպիոնէն բաց է ի բաց կը յայտարարէր, թէ ինքն է միակ որոշողը Հայաստան-Թուրքիա բանակցային գործընթացի ուղղութիւնները ճշդելու գործին: Ինքն է միակ իշխանութիւնը: Պարզ խօսքով, չկան եռեակ իշխանութիւններ: Չկայ տարանջատութիւն յիշեալ իշխանութեանց միջեւ: Չկայ խորհրդակցութիւն՝ Ընդդիմութեան ուժերուն հետ: Ինք ունի «մանդատ» ամեն ինչ ընելու: Ինք ունի «մանդատ» նոյնիսկ երկիրը յանձնելու թշնամիին: Ծիշդ ինչպէս՝ ինքն էր 2020-ի Նոյեմբեր 9-ի եւ 2021-ի Յունուար 11-ի անձնատուութիւնները ճարտարապետողը: Իր վերջին «ատուլիս»ը անգամ մը եւս բացայայտեց, որ իր մտածողութեամբ՝ Արցախը յստակօրէն կը մտնէ Ատրպեյճանի հողայինամբողջականութեան մեջ: Ինք պատրաստ է պաշտօնական ճանաչում տալու 1921-ի Կարսի ապօրինի եւ հայրենակործան պայմանագրին: Ինք պատրաստ է ՀՀ տնտեսութեան դոնէրը լայն բանալու թրջական ապրանքի ներխուժման եւ dumping-ին առջեւ գիտնալով հանդերձ, որ թշնամին եկած է ՀՀ արտադրական համակարգը փճացնելու: Ինք պատրաստ է Հայաստանի տնտեսական տարածքը յանձնելու Թուրքիոյ յուսալով, որ թրջական ներդրումները – ի՞նչ բանէ մղուած – աշխատատեղեր կը ստեղծեն հայ աշխատաւորութեան համար իր իսկ երկրին մեջ... Ինք ունի «մանդատ» այս աղետը նիւթելու երկրի գլխուն: Ունի «մանդատ» ՀՀ արտաքին քաղաքականութեան ռազմավարական ամբարտակները ամեն քայլափոխի պայթեցնելու... Ինք ունի՝ եւ հիմա հարց տանք, թէ ԻՍԿԱՊԷՍ ՌՎ ՈՒՆԻ «ՄԱՆԴԱՏ» ԱՅՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՂԵՏԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ...

Պատմութիւնը շղթայաւորումն է օրը-օրին զարգացող իրադարձութիւններու հոլովոյթի մը անցեալի, ներկայի եւ ապագայի իրերահաջորդ փուլերով: Այսօրու ան պարտութիւնը – այսօրու ան Փաշինեանը – այսօր չէ, որ ծնունդ առած է: Ան եփած է այս հանրապետութեան պատմութեան հնցին մեջ... Ան ծնած է մեր պետական համակարգի բազմադիմի խմորումներէն: Մեր հաւաքական մեղքերն: Մեր ձեռնափութիւններն: Մեր ձախաւերութիւններն: Ան կայ, քանի որ մենք չկանք: Զանի որ այս հանրապետութեան օրով չէ եղած եւ չկայ հայ ազգային գերագոյն շահի աշխարհացունց կողմնորոշումը:

Հայ անկախ պետականութեան երեսամեայ փորձը ցարդ անցած է չորս փուլերէ: Պայմանականօրէն կոչենք զանոնք առաջին երեք նախագահներու անուններով, իսկ վերջինը՝ Վարչապետ Փաշինեանի: Բնական է, որ այդ փուլերը գնազանուին իրարմէ շարք մը յատկանիշներով եւ պատմական պահու գործօններով: Բայց այդ բոլորէն առաջ եւ ետք, կարեւոր է ի վերջոյ տեսնել, որ անկախ պետականութեան ժամանակը սահմանող մեծ գործօնը երկրէն ներս տիրող տնտեսակարգն է: Այսինքն՝ այն մենաշնորհային համակարգը՝ որ ծնունդ առած է մեր երկրի *օլիգարխիային*: Այսինքն՝ մեր անկախ պետականութեան կենսաքննելու ներս գործող միակ իսկական քաղաքական ուժին՝ որ ցարդ տնօրինած է ՀՀ ազգային ռազմավարութեան ընթացքը: ՀՀ իշխանութեան ղեկին տիրապետող իրերայաջորդ նախագահներն ու վարչապետները կրնան ոխերիմ հակառակորդներ ըլլալ իրարու, բայց իրենցմէ իւրաքանչիւրի ետին դասակարգային նոյն *օլիգարխիական* համակարգն է, որ իր ձեռքերուն մեջ

կը պահէ երկրին կենսական կամրջազուխները: Իսկ Ընդդիմութիւնը:

Յաւալի իրականութիւնը այն է, որ Ընդդիմութիւնն ալ ունի իր ներքին բարդ շերտաւորումները: Անոր որոշիչ զանգուածը (critical mass, կրիտիկական մասսա) ցարդ եղած է նոյն *օլիգարխիայի* իշխանութեան ժամանակաւորապէս դուրս գտնուող մէկ հատուածը, որ կը սպասէ իր յաջորդ հերթին: ԻՍԿԱՊԷՍ ԸՆԴԴԻՄՈՒԹԻՒՆԸ – ներառեալ առաջին հերթին՝ իմ կուսակցութիւնս – լծուած է երկրին կենսաքննելու ազնիւ պայքարին եւ սակայն՝ ՓՈԶՐԱՄԱՍՆԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԸ եւ քաղաքական շրջափակման բոլոր խարդաւանքները դիմագրաւելով: Որքերգութիւնը այն է, որ ցարդ երկրի քաղաքական բեմին վրայ ղեկավարողն ու ղեկավարուողը, այսինքն՝ *օլիգարխիան* եւ ժողովուրդը, կը թուին գտնուիլ անգիր եւ անսուրբ դաշինքի (unholy alliance) մը մեջ: Անոնք կը շահագործեն զիրար եւ այդ հոլովոյթով կ'ամրապնդեն եւ կը մշտնջենաւորեն մէկ-մէկու դիրքերը հասարակութեան մեջ: Այսինքն՝ տիրողը՝ տիրո՞ղ է շահագործուողը շահագործուո՞ղ պահելով յաւիտեանս յաւիտենից: Այս առումով, իսկական ընդդիմութիւնը մերժուած է միաժամանակ երկուքէն՝ երկիրը թաղուած պահելով իր քաղաքական ճահիճին մեջ:

Իսկ ի՞նչ կը պատահի երկրի արտաքին թշնամիի բերդերէն ներս:

Այսօր արդէն կը տեսնենք, որ անցնող երեսուն տարիներու ընթացքին Թուրքիա եւ Ատրպեյճան հետեւողականօրէն ձեւաւորած են փակթուրքի մի համաթրքական իրենց ծրագիրը, որ կ'ենթադրէ հայ անկախ պետականութեան վերջնական լուծարումը եւ հայ ժողովուրդի ապահայրենացումը: Նաեւ կը պարզուի, որ հայ անկախ պետականութեան ղեկավարութիւնը ոչինչ ըրած է երկրի լիսելիութիւնը (viability, sustainability) ապահովելու համար: Ան ոչինչ ըրած է համահայկական ազդու եւ համապարփակ ռազմավարութիւն մը մեջտեղ բերելու ազգային հրամայականին ի պատասխան:

Բոլոր երեւոյթները ցոյց կու տան, որ թուրքաւարպեյճանական *օլիգարխիան* անքակտելիօրէն մաս կազմած է համաթրքական խորքային պետութեան գործողութիւններուն: Ատրպեյճանի քարիւղի եւ կազի պաշարներու եկամուտները լայնօրէն տրամադրուած են համաթրքական ռազմավարութեան յաղթանակին: Անոնք ծառայած են Մոսկուան գործնականօրէն լծելու թուրքաւարպեյճանական քաղաքականութեան: Ծառայած են Ռուսաստանի ռազմական արհեստագիտութիւնը անկաշկանդ հոսեցնելու դէպի Ատրպեյճան: Ծառայած են յատուկ եւ առանձնաշնորհեալ յարաբերութիւններ ձեւաւորելու Բաքուի եւ Մոսկուայի (իմա՝ Փութինի) establishment-ի միջեւ: Ծառայած են Մոսկուան մղելու դիտաւորեալ կրաւորականութեան Ատրպեյճանի նախա-յարձակման դիմաց... Ծառայած են լիովին չէզոքացնելու Հայաստանը Կովկասեան տարածաշրջանի բեմին վրայ:

Իսկ ի՞նչ ըրած է Հայաստանի *օլիգարխիան*: Ան եղած է ռուսական *օլիգարխիայի* արբանեակը: Անոր գործընկերը: Անոր ստորադասը: Ռուսաստանի կողմէ Հայաստանը դիտուած է որպէս արժան հումքի աղբիւր, որ հոսած է դէպի ռուսական արտադրամաս ՀՀ *օլիգարխիայի* միջոցով: Հայաստան-Ռուսաստան դիւանագիտական յարաբերութիւնները անցնող երեսուն տարիներու ընթացքին հետզհետէ աւելի շեշտակիօրէն եղած են տեղաշարժի մեջ: Յատկապէս ներկայ իշխանութեան օրով: Յաճախ կը խօսուի այն մասին, թէ գոյութիւն ունեցած է մնայուն եւ գործօն դիւանագիտութիւն երկու երկիրներու միջեւ եւ Մոսկուան միշտ ինքզինք յայտարարած է ռազմավարական գործընկեր՝ Հայաստանին: Այս հռետորաբանութիւնը, սակայն, իր նոյնական զուգահեռները ունի ռուս-ատրպեյճանական յարաբերութիւններու ոլորտին մեջ: Անոնք ոչինչ կը նշանա-

## ՈՎ ՈՒՆԻ...

Սկզբը՝ էջ 7

Կեն, եթե անոնց ետին չգործեն իսկական ցանցերը: Այդ ցանցերուն մեջ տեղ ունեւր Զայաստանը անցեալին եւ ակնյայտօրէն հիմա չունի: Ի տարբերութիւն Ալիեւին՝ որ լայնօրէն թափանցած է յիշեալ ցանցերէն ներս: Այս է, որ ցոյց կու տան իրականութեան տուեալները:

Երեսուն տարի շարունակ, անխնայ շահագործման ենթարկուած է մեր երկիրը մենաշնորհային համակարգի թաթին տակ: Ճիշտ է, որ Երեւանը կը փայլի իր պողոտաներով, շէնքերով, շուկաներով, ճաշարաններով: Այո՛, ան վերածուած է երեւանեան քաղքենիութեան հաճոյավայրի: Ճիշտ է նաեւ, որ մենաշնորհային տնտեսութեան գուճահեռ յաճախ երեւան կու գան երիտասարդ ձեռներէցութեան ողջունելի օրինակներ: Բայց երկիրը կը գտնուի աղքատութեան ճիրաններուն մէջ: Եւ այս մէկը՝ բոլորովին անկախ յետպատերազմեան փլուզումներէն: Փաստը այն է, որ ամբողջ երեսուն տարի մենաշնորհային համակարգը լայնօրէն խուսափած է երկրի վերաներդրումային դաշտէն: Ստեղծուող հարստութեան վերաբաշխումը տնտեսութեան մէջ կը գտնուի ողբալի մակարդակի վրայ: Զամակարգի տերերը իրենց շահոյթը լայն չափերով հանած են երկրէն դուրս փոխանակ նոր եւ որակաւոր աշխատատեղեր ստեղծելու երկրին մէջ: ԱՄԵՆ ՕՐ ԱԲԵԼԻ ՈՒՌՃԱՏՈՂ ՄԵՆԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԶԱՐԱՏՈՒԹԵԱՆ ԴԻՄՁՑ՝ ԱՄԵՆ ՕՐ ԱԲԵԼԻ ԱՐՔԱՍԱՅԱԾ Ե ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԸ ԵՒ ԳԱՂԹԱԾ՝ ԵՐԿՐԵՆ ԴՈՒՐՍ:

Այս բոլորէն կը հետեւի, որ այսօր մենք պիտի ճիշտ հասկնանք բնոյթը մարտահրաւերին: Թշնամին միայն արտաքին սպառնալիքի ուժերը չեն: Թշնամին մեր երկրի ուժականութիւնները ջլատող բոլոր ներքին եւ արտաքին գործօններն են, որոնք ամբողջացուցած են զիրար եւ երկիրը բերած անպաշտպանելիութեան ներկայ աստիճաններուն: Այդ գործօնները միահիւսուած են մէկգմէկու՝ արգիլելով երկրի հզօրացումը քաղաքական, տնտեսական, պաշտպանական, ընկերային, ժողովրդագրական, մշակութային եւ աշխարհաքաղաքական ոլորտներէն ներս:

Այս գահավէժն է, որ կանգ պիտի առնէ ամենէն արագ եւ վճռական քայլերով: Նախկին նախագահներու առաջնորդութեամբ հրապարակ իջած քաղաքական խմբաւորումները այսօր իսկ կը մատնեն անընդունելի դիտաւորութիւններ: Անոնք կը խօսին հինը ետ բերելու մտայնութեամբ: Անոնք նոյնիսկ կը խօսին նորը ստեղծելու հռետորաբանութեամբ, բայց կը շարունակեն փայփայել հինին մեղաւոր երազը: Այս խաղընթիւնը պիտի կանգ առնէ: Վաղուան ոստիւնը պիտի իրագործուի իսկական ընդդիմութեան որակներով եւ գաղափարախօսութեամբ: Եւ որպէսզի ԶԶ հաւաքական կեանքի այս յեղաշրջումը իրականութիւն դառնայ, ոտքի պիտի կանգնի մեր ժողովուրդի ուժական, արդարախօհ, հայրենի անկախ պետականութեան վերելքի նորմերով տոգորուած լուռ գանգուածը, զոր բարոյալքելու քաղաքականութիւնն որդեգրած է ներկայ իշխանութիւնը: Վերջ բարոյալքութեան: Ոտքի պիտի կանգնի մեր երիտասարդութիւնը երկրի եւ արտերկրի անկիւններէն ԲՈՒՆՈՐ թշնամի ուժերու դէմ ճակատ յարդարելու վճռակամութեամբ եւ հաստատած մեր այսօրուան եւ վաղուան պայքարի չափանիշները: Բոլոր անոնք, որոնք կը սուքան մեր շուրջ մեր երկիրը ամառելու ախորժակներով, գործ պիտի ունենան այս նոր յեղափոխութեան հետ: Բոլոր անոնք, որոնք կը պատրաստուին մեր երկիրը թշնամիին նուիրելու, պիտի չտեսնեն այդ օրը: Բոլոր այն արտաքին ուժերը, որոնք հեռուէն կամ մօտէն մասնակից են հայ անկախ պետականութեան սպանդին, անձնապէս եւ հաւաքաբար պատասխանատու են իրենց արարքներուն համար: Կարելոր չէ, թէ ովքեր են անոնք: Բաղին, Կոզբաղին եւ բոլոր միւսները պիտի գիտնան, որ այս յեղափոխութիւնը ոչ թաւիշէ է ըլլալու, ոչ մետաքսէ:

Փաշինեան եւ իր համակարգը յաջողապէս անդամալուծած են երկրի ժողովրդավարական բոլոր գլխաւոր կառուցակարգերը: Անոնք սառեցուցած են ԶԶ Սահմանադրութիւնը եւ լծուած՝ հայ անկախ պետականութիւնը անդամահատելու չարաշուք գործին: Փաշինեան կը յաւակնի ըսել, որ այդ բոլորին համար ինք ունի ժողովուրդին ամբողջական լիազօրութիւնը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ դառն հեգնանք մը ուղղուած ԶԶ հանրութեան եւ ազգին: Այո՛, կան այսպիսի անհեթեթ ժամանակներ բոլոր ժողովուրդներուն պատմութեան մէջ, երբ ժողովուրդը հոգեբանակաւ տրուած է ինքնիր գերագոյն շահերուն դէմ քուէ տալու պարտադրանքին տակ: Այսինքն՝ այնպիսի ժամանակ՝ երբ ժողովուրդը դուրս եկած է իր պատմութենէն: Ոտնակոխած է իր պատմական առաքելութեան հարազատ նորմերը: Զետեւաբար այն ինչ, որ ունի Փաշինեան՝ խարդախուած եւ ապաստանադրական «լիազօրութիւն» է, որ լիազօրութիւն չէ եւ չի կրնար ըլլալ եւ պետք է կասեցուի ամէն գնով:

Վարչապետ Փաշինեան միայն մէկ բան ունի ընելիք: Ամենէն արագ ձեռով դուրս գալ իշխանութենէ, ինչպէս ըրաւ ԶԶ Առաջին Նախագահը: Դուրս գալ իշխանութենէ Թուրքիոյ հետ որեւէ – թէկուզ՝ Նախնական – համաձայնութիւն կնքելէ առաջ: Դուրս գալ՝ գէթ այս ուշ ժամուն ցուցաբերելով իմաստութիւն եւ յարգելով ԶԶ Սահմանադրութիւնն ու հայոց պատմութիւնը: Դուրս՝ քանի որ սպառնած են երկրի համբերութեան լուսանցքները: Եւ քանի որ եկած է ժամանակը, որ երկրի ժողովրդավարական ուժերը իջնեն հրապարակ հայոց պատմութեան «մանդատ»ով, որ խարսխուած է ԶԶ Սահմանադրութեան հիմնարար սկզբունքներուն մէջ եւ իրենց ձեռքերուն մէջ առնեն հայ անկախ պետականութեան վտանգուած ճակատագիրը: Զայրենիքի փրկարարներուն օրն է: Զրաշագործողներուն օրն է: Ծակատագրողներուն օրն է: Նոր յարացոյցը հաստատողներուն օրն է: Տեր ընդ ձե՛զ:

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՍՕ Խաչ- Ազգ. Պատասպարանը կարիքը ունի փորձառու քարտուղարուհիի մը, որ լաւապէս տիրապետած ըլլայ հայերէնի եւ հմուտ՝ համակարգիչի գործածութեան:

Աշխատանքի ժամերն են առաւօտեան 10:00-էն երեկոյեան ժամը 6:00:

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել ստորեւ յիշուած համարներուն, կամ ներկայանալ Ազգ. Պատասպարան:

0945472619 - 0944566368 - 4442022




**ՀՈԳԵՂԱՆԳԻՍՏ**  
**ՀԱՆԳՈՒՅԵԱԼՆԵՐ**  
**ՄԱՐԻ ՏԵՐՎԻՇԵԱՆԻ**  
**(ՇՆԵԱԼ ՏԵՐ ԴԱՉԱՐԵԱՆ)**  
**ԵՒ**  
**ԲԱՐԵՆՆՈՐԳ ՃՈՐՃ ՍՐԿ. ՏԵՐՎԻՇԵԱՆԻ**



Հանգուցեալներուն ցառասունքին եւ Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 6 Փետրուար 2022-ին, յաւարտ Ա. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Զալեպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Նիւ Սպիտակ» ճաշարանէն ներս:

**ՀՈԳԵՂԱՆԳԻՍՏ**  
**Հանգուցեալ**  
**ԱԼԻՍ ԿԻՒՎԱՆԷՍԵԱՆ**  
**(Ճնեալ՝ ՄԱՆՈՒԿԵԱՆ)**



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 6 Փետրուար 2022-ին, յաւարտ Ա. եւ Անմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Զալեպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Նիւ Սպիտակ» ճաշարանէն ներս:

### «ԳԱՆՁԱՍԱՐ»

#### ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

**Խմբագիր՝ Չարմիկ Զիլմբոյեան-Պօղիկեան**  
**Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան**  
**Վեհան Պարսումեան**  
**Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյեան**  
**Գրաշար՝ Անի Թովալեան-Սարոխան**  
**Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան**  
**Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան**  
**Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլմբոյեան**  
**Հաշուապահ՝ Սեւակ Կիլվանեան**

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

**www.kantsasar.com**  
**www.kantsasar.com**  
**www.kantsasar.com**



## ՀՄԸՄ-ԱԿԱՆ ԵՂԲԱՅՐ ԸՈՐՃ ՌԱՍՏԿԵԼԷՆԵՄՆԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝ ՀՄԸՄ-Ի ՓԱՌՎԻՈՐ ԱՆՑԵԱԼԷՆ

Ա.

Սոյն շարքով լոյս կ'ընծայենք ՀՄԸՄ-ական հանրաժանօթ մարզիկ, տնօրէն Ըորճ Ռաստկելէնեանի յուշագրութիւններն ու վկայութիւնները ՀՄԸՄ-ի Հալէպի եւ Պէյրութի պատմութենէն, հաւատալով, որ ՀՄԸՄ-ի մարզական եւ սկաւտական շարքերուն մէջ թրծուող սերունդներ կը ներշնչուին միութեան պանծալի պատմութեամբ ու մարզիկներու անմեռ յուշերով:

\*\*\*

ՀՄԸՄ-ի Հալէպի ու Պէյրութի գոյգ խումբերու փառաւոր անցեալի մասին յօդուածներով եւ կարեւոր տեղեկութիւններով հանդէս կու գամ, ձեզի

ղէպի յառաջ, անասան, անվեհեր, բացառիկ յաղթանակներ, փայլուն յաջողութիւններ եւ յիշատակելի նուաճումներ արձանագրելու առաջադրանքով:

Թող ձեր շքեղ, բարի երթը յաջողութեամբ պսակուի:

Երրորդ. Ժամանակէ մը ի վեր ականատես ու ականաջալուր կ'ըլլամ անախորժ արարքներու, որոնց հերոսները, դժբախտաբար, կարգ մը մարզիկներ են, իրենց հետ ունենալով օտարականներ: Անոնք կը փորձեն ՀՄԸՄ-ի գեղեցիկ անցեալի անմոռանալի նուաճումներն ու յաղթանակներու շքեղ պատկերը խեղաթիւրել, պղծել, այլափոխել, անհիմն, անճիշդ տեղեկութիւններ փոխանցելով, հեքիաթներ յօրինելով եւ իրենց խաղընկերներուն արդարօրէն ձեռքբերած արդիւնքները իւրացնելու փորձեր կատարելով, իրենց անձին վերագրելով, պարզապէս իրենց հիւանդագին տեսլիութեան, փառամոլութեան յագուրդ տալու համար: Անոնք իրենց անհատական շահերը անելի վեր կը դասեն միութեան շահերէն ու սկզբունքներէն եւ կը դիմեն այնպիսի արարքներու, որոնք խոտոր կը համեմատին միութեան շահերուն ու նպատակներուն հետ:

Ի տես այս բոլորին, միութեանակալի խիղճս եւ ՀՄԸՄ-ի դպրոցէն ներս ստացած դաստիարակութիւնս երբեք չէին արտօնէր զիս, որ անտարբեր մնայի Նորահաս սերունդին ՀՄԸՄ-ի փառաւոր անցեալի պատկերէն բաժին մը խեղաթիւրուած, պղծուած փոխանցելու երեւոյթին դիմաց:

Հետեւաբար, անսալով եւ ընդառաջելով խղճիս ձայնին, հաւատարմութեամբ եւ ճշգրտութեամբ, հիմնուելով վաւերական տուեալներու ու արխիւներու վրայ, դիմեցի այս քայլին՝ սրբագրելու, ճշդելու եւ ՀՄԸՄ-ի հարուստ պատմութեան այս փուլը իր հարազատ, պայծառ պատկերով ներկայացնելու:

Փառք ու պատիւ ՀՄԸՄ-ին եւ իր անցեալի աննախընթաց, բարեբեր ու պատուաբեր ձեռքբերումներուն:

Նախ պիտի ներկայացնեմ Հալէպի ՀՄԸՄ-ի ֆութպոլի խումբին պատուաբեր այն իրագործումը, որ տեղի ունեցաւ 1964-1965-ի եղանակին, երբ ՀՄԸՄ-ի աննման եղբայրներուս հետ, հակառակ բազմատեսակ խոչընդոտներու յաջողեցանք անկարելին կարելի դարձնել եւ ՀՄԸՄ-ի վայել գիտակցութեամբ մեր ժողովուրդին արժանապատուութիւնը բարձր պահելու նախանձախնդրութեամբ բազմիւ Սուրիական Արաբական Հանրապետութեան ֆութպոլի առաջին ախոյեանութեան գահին, պատուաբեր յաղթանակ ապահովելէ ետք Սուրիոյ բանակի «ալ ճէշ» խումբին դէմ:

«Գանձասար»-ի հետագայ թիւերով, երբեք մատու պիտի ներկայացնեմ այս պատմական իրագործումը, որ ոսկեայ տառերով արձանագրուեցաւ Սուրիոյ եւ ՀՄԸՄ-ի պատմութեան էջերուն վրայ:

(Շար. 1)



ներկայացնելով այս հսկայ միութեան՝ ՀՄԸՄ-ի անցեալի պատմութեան անմոռանալի նուաճումներէն ու սիրագործութիւններէն օրինակներ, որոնք իրականացան բոլոր ՀՄԸՄ-ականներու ջանքերուն, անսակարկ նուիրումին, թափած քրտինքին ու բացարձակ գործակցութեան շնորհիւ, անխտիր: Այս յօդուածաշարքը կը հրապարակեմ երեք հիմնական նպատակներով:

Առաջին. յատուկ շնորհակալութիւն, յարգանք եւ գնահատանք յայտնելու բոլոր անոնց, ի մասնաւորի ֆութպոլի եղբայրներուս, որոնք ՀՄԸՄ-ականի ազնիւ գիտակցութեամբ, բժախնդիր կարգապահութեամբ, հաւատարմութեամբ, անսակարկ նուիրումով եւ մանաւանդ ՀՄԸՄ-ի «բարձրացիր, բարձրացրո՛ւր» նշանաբանին հաւատք ցուցաբերելով նպաստեցին անոր գոյատեւման, վերելքին եւ յաջողութիւններուն: Անոնք ոսկեայ տառերով արձանագրեցին փառաւոր անցեալի գեղեցիկ եւ անմոռանալի էջեր:

Բի՛ւր յարգանք ու երախտագիտութիւն բոլորին: Կը խնդրեմ Աստուծմէ, որ մեզ մէ յաւատ քաժնուած ՀՄԸՄ-ականներուն երկնքի արքայութեան արժանացնէ, եւ անոնք դրախտային անդաստանին մէջ հանգիստ, խաղաղ եւ ապահով ննջեն:

Առողջութիւն, եռանդ, կորով եւ յաջողութիւն կը մաղթեմ բոլոր անոնց, որոնք տակաւին կը շարունակեն ծառայել այս հսկայ միութեան՝ ՀՄԸՄ-ին, նորանոր յաջողութիւններ ապահովելու յոյսով ու առաջադրանքով

Երկրորդ. ՀՄԸՄ-ի նորահաս սերունդին իրագրել դարձնելու այս հըսկայ միութեան փառաւոր անցեալին որոշ փուլերուն, ծանօթացնելու զիրենց իրագործուած նուաճումներուն, որպէսզի առաւել խրախուսուին, ոգեւորուին, գօտեւախոյն, քաջալերուին եւ իրենց հոգիներն ու սրտերը ողորուին արդար հպարտութեամբ: Թող անոնք եռանդով շարունակեն սրբազան այս պարտականութիւնը՝ բարձր ու վառ պահելու իրենց վստահուած ՀՄԸՄ-ի լուսատու ջահը, առաւելագոյն չափով ծառայելու անելի քան հարկաւոր կեանք ունեցող այս միութեան, նպաստելու անոր բարեբեր ու յաջող երթին, միշտ հաւատարիմ մնալով այս դարբնոցին, մարդակերտումի եւ հայակերտումի սրբազան դպրոցին՝ ՀՄԸՄ-ին:

Սիրելի՛ ՀՄԸՄ-ականներ,

Ինքնավստահ, հաստատ քայլերով, հաւատքով ու տեսիլքով քալեցէ՛ք

### ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

«Գանձասար» շնորհակալութիւն կը յայտնէ քանարահայ հերետեալ նուիրաբուններուն, որոնք իրենց նիւթական եւ բարոյական աջակցութեամբ սպար կը հանդիսանան հայ մամուլին.

- Սագո Բէօւէեան**
- Սագո Եազուպեան**
- Լևոն Պաղպասարեան**
- Ժան Նալլաճեան**
- Նրանդ Նանարեան**
- Կէրի Մինասեան**

«Գանձասար» Շարադաթերթի Վարչութիւն



## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

### ԽՈՅ



Մի՛ յետածգէք ձեր գործերը: Շաբաթը յաջողութեամբ պիտի յատկանշուի: Հին ծանօթներ պիտի ուրախացնեն ձեզ հետաքրքրական նորութիւններով եւ առաջարկներով:

### ՑՈՒԼ



Փորձեցէ՛ք խուսափիլ արկածախնդրութիւններէ: Չգուշութիւնը եւ հետեւողականութիւնը շատ կարեւոր են այս օրերուն, յատկապէս երբ խօսքը կը վերաբերի ընտանեկան գործերուն:

### ԵՐԿՈՐԵԱԿ



Դուք կարելիութիւն ունիք ստեղծագործական մօտեցում պահանջող աշխատանք իրականացնելու: Ձեր շրջապատը պիտի գնահատէ ձեր այս կարողութիւնը:

### ԽԵՑՁԵՏԻՆ



Անհրաժեշտ է զգուշութիւն ցուցաբերել տնտեսական գործերուն մէջ, խուսափիլ անտեղի ծախսերէն: Լյլլապէս կը գոչաք մսխուած գումարին համար:

### ԱՌԻԾ



Դուք դիրաւ լեզու կը գտնէք ձեր շրջապատին հետ, ինչ որ կ'օգնէ լուծելու գործնական բազմաթիւ հարցեր:

### ԿՈՅՍ



Ձեր ճնշուած առօրեային դուրս գալու համար օրական ժամանակ յատկացուցէ՛ք ընթերցանութեան եւ մարզանքի:

### ԿԵՒՈՔ



Շաբթուան ընթացքին ձեր տրամադրութիւնը կրնայ փոփոխական ըլլալ: Փորձեցէ՛ք հաւասարակշռել ձեր միտքն ու զգացումները՝ զերծ մնալու պոռթկումներէ:

### ԿԱՐԻՃ



Դուք ձեզ չափէն աւելի մի՛ ծանրաբեռնէք, իսկ ձեր գործատիրոջ մի՛ տաք անիրականանալի խոստումներ: Փորձեցէ՛ք ձեր կարելին ընել պարզապէս:

### ԱՂԵՂՆԱՊՐ



Ընկերներու հետ ժամանակ անցընելը ծանր շաբթուան աւարտին կը հանգստացնէ ձեզ եւ աշխատանքի նոր հորիզոններ կը բանայ ձեր դիմաց:

### ԱՅՇԵՂՋԻՐ



Ձեր սիրելիին պարգեցէ՛ք ձեր զգացումները: Կեանքը կարճ է, իսկ առիթները՝ սահմանափակ: Մի՛ զգուշանաք անկեղծանալէ:

### ՋՐՅՈՍ



Համակերպող եւ ճկուն էք աշխատանքային տարբեր միջավայրերու մէջ, ինչ որ պիտի օգնէ ձեզի նուաճելու նոր պաշտօններ:

### ՁՈՒԿ



Ճիշդ ժամանակն է նոր ծանօթութիւններու, որոնք կրնան յիշարժան ու սիրային յարաբերութիւններու սկիզբ դառնալ:



## ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ

# 10 ԹԵԼԱԴՐԱՆՔ ԴԷՄՔԻ ԱՄԷՆՕՐԵԱՅ ԽՆԱՄՔԻՆ ՀԱՄԱՐ

Ստորեւ կը ներկայացնենք տասը խորհուրդներ, որոնց հետեւելով կարելի է փափուկ եւ մաքուր պահել դէմքին մաշկը:



- 1) Դեմքը խնամելու քսուկները ընտրեցէ՛ք մեկնելով ձեր մաշկին տեսակէն: Բնականաբար, չոր եւ իւղոտ մաշկերու պահանջները կը տարբերին:
  - 2) Յատուկ ուշադրութիւն դարձուցէ՛ք մաշկի նուրբ մասերուն: Մաշկը դէմքի որոշ մասերուն վրայ շատ աւելի զգայուն է, յատուկ խնամքի կարիք ունի, ինչպէս օրինակ՝ աչքերու եւ շրթունքի մաշկը:
  - 3) Նրբօրէն մաքրեցէ՛ք մաշկը: Չգայուն մաշկին խնամքը կը սկսի շպարը մաքրելով: Հարկ է ընտրել մաքրելու այնպիսի քսուկներ, որոնք նախատեսուած են զգայուն մաշկի համար:
  - 4) Աչքերը վտանգաւոր գօտի են: Մաշկը աչքերուն շուրջ 10 անգամ աւելի բարակ է, քան դէմքի որեւէ այլ մասի վրայ: Չգուշօրէն եւ նրբօրէն հեռացուցէ՛ք աչքի շպարը, այլապէս կրնաք գրգռել գայն եւ կարմրութիւն յառաջացնել:
  - 5) Փիլիսկը դէմքի մաշկի խնամքին համար անհրաժեշտ փուլ է: Ձեր մաշկի տեսակին համապատասխան փիլիսկի տեսակ ընտրեցէ՛ք եւ շաբաթը մէկ անգամ կատարեցէ՛ք գործողութիւնը:
  - 6) Ձեր մաշկը միշտ խոնաւ պահեցէ՛ք համապատասխան քսուկներ օգտագործելով եւ յաճախակիօրէն ջուր եւ այլ հեղուկներ խմելով:
  - 7) Փորձեցէ՛ք բնական միջոցներով մաքրել ձեր մաշկը, օգտագործելով պտուղի տեսակներ, մեղր եւ մածուկ:
  - 8) Պաշտպանեցէ՛ք ձեր մաշկը արեւէն: Տարուան բոլոր եղանակներուն համապատասխան արեւէն պաշտպանող քսուկներ օգտագործեցէ՛ք: Անոնք ձեր մաշկը կը պաշտպանեն արեւի ճառագայթներուն վնասակար ազդեցութենէն:
  - 9) Խուսափեցէ՛ք արտաքին անբարենպաստ գործօններէն: Ծխելը, ճնշուածութիւնը վատ անդրադարձ կ'ունենան մաշկին վրայ: Տուն հասնելուն պէս անմիջապէս մաքրեցէ՛ք ձեր մաշկը:
  - 10) Մի՛ մոռնաք ձեր շրթները եւս խնամել: Եթէ շրթները յաճախ կը չորանան, զանոնք փափուկացնող եւ խոնաւ պահող քսուկներ օգտագործեցէ՛ք:

## ԲՈՅՍԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ

Բոյսերը ոչ միայն տան կամ գրասենեակի տեսքը կը զեղեցկացնեն, այլեւ դրական ազդեցութիւն կ'ունենան մեր տրամադրութեան եւ առողջութեան վրայ, յաճախ ներծծելով վատ կենսուժը եւ լաւը արտադրելով, օդը մաքրելով եւ այլն:



ՆԱՍԱ լուրջ ուսումնասիրութիւններ կատարած եւ թուած է 12 բոյսեր, որոնք կը բարելաւեն մեր քունին որակը: Թուէ՛ք քանի մը հատը:

- Յասմիկ**  
Թաղարի մէջ աճող տարբերակը կ'արժէ գետեղել ննջասենեակը: Հաստատուած է, որ այս բոյսը կը նուազեցնէ անձկութեան եւ ընկճախտի մակարդակը եւ կը նպաստէ քունին:
- Լաւանդ**  
Այս բուրանտ բոյսը կը կանոնաւորէ սիրտի բաբախումները եւ արեան գերճնշումը: Հանգստացնող այս բոյսը կ'արժէ գետեղել ննջասենեակին մէկ անկիւնը:
- Սկետրոջ Լեզուն**  
Այս հրաշք բոյսը գիշերը թթուածին արձակելու եւ ածխաթթու կլանելու յատկութեամբ օժտուած է ննջասենեակին ապականած օդը մաքրելով՝ տնային այս բոյսը մեծապէս կ'օգնէ մեր քունի որակի բարելաւման:
- Ալոէ Վերա**  
Այս բոյսը ցուցակագրուած է՝ որպէս ՆԱՍԱ-ի օդը բարելաւող լաւագոյն բոյսերէն մէկը, ունի սկետրոջ լեզուի յատկանիշները: Ան բոյսը նաեւ մեծ խնամքի չի կարօտիր:  
Եգիպտացիներուն կողմէ «անմահութեան բոյս» համարուած ալոէն շատ դիրին եւ արագ կը բազմանայ. այնպէս որ, եթէ գնէք հատ մը, շուտով կ'ունենաք ալոէի բոյսեր ձեր տան բոլոր սենեակներուն մէջ:
- Խաղաղութեան Շուշան**  
Ոչ միայն աչքին հաճելի՝ խաղաղութեան շուշանը ՆԱՍԱ-ի գերաստղային բոյսերէն մէկն է, որ կ'օգնէ օդը գտելու տեսակաւոր թունաւոր կիւթերէ: Ան ունի նաեւ օդը խոնացնելու յատկութիւն, ինչ որ կ'արգիլէ «չոր քիթի» եւ կոկորդի գրգռումները:





Ռաֆֆի Սիկահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԻՆՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

-Սուրիոյ պասքեթի դաշնութիւնը համաձայնագիր մը ստորագրեց Սուրիոյ հաւաքականի նորանշանակ մարզիչ Խաֆիր Զրիսպոյի հետ, որպէսզի ան ստանձնէ տղոց հաւաքականի մարզիչութիւնը: Մարզիչը Կիրակի օր մամլոյ ասուլիսէն ետք կատարեց իր առաջին մարզումը:

-Սուրիոյ տղոց Ա. 19-ի մրցումներուն, ՅՄԸՄ-ի կազմը 70-66 արդիւնքով պարտութեան մատնեց աղիւսակի առաջին դիրքը գրաւող Յուրիէն:

-Սուրիոյ պասքեթի տղոց ախոյեանութեան մրցումներուն, Դամասկոսի մէջ Ուահտէն 69-67 արդիւնքով պարտութեան մատնեց Իթթիհատը:

-Համաշխարհային ֆութպոլի 2022-ի ախոյեանութեան գտման մրցումներուն, Սուրիոյ հաւաքականը 2-0 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Իմարաթի կազմէն: Մրցումի տեւողութեան, սուրիացի խաղացողները ներկայացան անմակարդակ խաղարկութեամբ:



## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ՌԱՖԱՅԷԼ ՆԱՏԱԼ ՏԻՐԱՅԱՒ ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐՔԻ ԱՆՈՅՏԵԼՆՈՒԹԵԱՆ

Կիրակի օր կայացած Աւստրալիոյ բաց մրցաշարքի աւարտական մրցումին, սպանացի թենիս խաղացող Ռաֆայել Նատալ 2-6 / 6-7 / 6-4 / 6-4 / 7-5 արդիւնքով պարտութեան մատնեց ռուս մարզիկ Տանիյէ Մետվետեւը, ապահովելով Մեծ սաղաւարտի իր 21-րդ մրցանակը: Վերջին անգամ Աւստրալիոյ առաջնութեան նման արդիւնքի հասած է Ռոյ Էմերսընը, 1965-ին: Ռաֆայել Նատալ այս



յաղթանակէն ետք ապահովեց 2000 վարկանշային կէտ եւ արժանացաւ երկու միլիոն տոլար վարձատրութեան:

### ՌԵԱԼ ՓԱՓԱՔ ՈՒՆԻ ԶԵՆՔ ԲԵՐԵԼՈՒ ՊԱՐԱՐԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻՍՏԸ


Սպանիոյ մամուլին համաձայն, Սպանիոյ Ռեալ Մատրիդը հետաքրքրուած է Պայերն Միւնխի ֆութպոլիստ Կորենտին Տոլիսոյով:

Նշենք, որ Տոլիսոյի պայմանագրութիւնը Պաւարիոյ հետ մօտ օրերս պիտի աւարտի, այսպիսով սպանական ակումբը կարելիութիւն ունի ձեռք բերելու խաղացող՝ նուազ գումարով:

Ընթացիկ մրցաշրջանին Կորենտին Տոլիսոն գերմանական կազմին հետ մասնակցած է 15 հանդիպումներու, նշանակելով երեք կոլ եւ կատարած է երեք կոլերու փոխանցում:



### ՏԻԷԿՕ ԶՈՍԹԱՆ ԿՐԱՅ ԼԱԼԻԿԱ ՎԵՐԱՂԱՈՆԱԼ



Սպանացի մարզական լրագրող Էկրեմ Կոնուր յայտնած է, որ Աթլետիքոյի եւ Չելսիի նախկին յարձակող Տիէկո Զոսթան կրնայ պայմանագրութիւն կնքել Վալենսիոյ հետ:

Նշենք, որ Զոսթայի վերջին ակումբն էր Աթլետիքո Միլեյրոն, որուն հետ ան հանդէս եկաւ 2021-ի Օգոստոսէն մինչեւ 2022-ի Յունուար: Այդ ընթացքին, ան խումբին հետ տիրացաւ Պրազիլի ախոյեանութեան եւ բաժակին:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 376)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

### Հորիզոնական

- Հայկական ժողովրդական նուագարան: Հիմա:
- Ունեցող: Ճամբայ: Ձայնաւոր տառեր:
- Թափանցիկ, դիւրաբեկ ու կարծր նիւթ: Շաղկապ:
- Տառի մը անունը: Չորրորած պտուղ:
- Կատակ: Անվերջնատառ՝ հայ գուսան:
- Անձայն: Հակառակ՝անգիտակից մղում:
- Աղէկ: Հակառակ՝ հաստատական պատասխան: Տառի մը դրացիները:
- Շտապող պատգամաբեր՝ թղթատար:
- Ցուցական դերանուն: Եղանիլ բայի արմատը:
- Յեղաշրջումի մասնակից:
- Առաջին կարգ: Միւլէտ յատակը: Տարի:
- Եւս: Դանիել Վարուժանի երկերէն (երկու բառ):


### Ուղղահայեաց

- Հրաբխային քար՝ բնակարաններու շինութեան համար օգտագործուող: Կրկնուած բաղաձայններ: Իգական անուն:
- Շաղկապ: Տառի մը անունը: Տորենը ալիւրի վերածել:
- 7401: Լեռնէն թաւալող ձիւնակոյտ: Եւս:
- Ձիու գարդարուն ծածկոց:
- 661: Շաղկապ: Ոխ պահէ՛:
- Հակառակ՝ 5300: Վերք:
- Ագռաւի գոգոց: Սարսափ: Բաջ:
- Ռումբի տեսակ:
- Երկինքի եւ երկրի իրարու խառնման գիծ: Հակառակ՝ առաջին կինը:
- Հեթանոսական կրօն:
- Տառի մը անունը: Հնձելու գործիք: Տառի մը դրացիները:
- Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, գօրավար: Անորոշ դերանուն:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 375)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ն	ա	գ	դ	ր	ն	ւ	ա	տ	ի	ք	
2	ա	ն	ա	կ	ն	կ	ա	լ	ա	ր	ի	
3	ր	է		ն	դ			ի	ր	ա	ն	
4	դ	ծ		ա	ե	ա		ն	ա	ւ	ա	
5	ն	ք		ն	ք	ա	ն	ձ	ք	խ		
6	ա		լ	ք	ա	ի	ն	ն	ն			
7			լ	ն	ի			ա	ր	դ		
8	ձ	ի	ւ	ն	ա	ծ	ա	ծ	կ	ի		
9	գ	ի	կ			ն	կ	ա	ր			
10	ա		ո	ա	մ	ի	կ	ն	ն			
11	ր		տ	ի	ք			կ	ա	ն	ա	
12	ն	ք	ն	ւ	ա	ն	դ	օ	տ	ն	ա	ն

ԼՈՒՐԻՆՍ





## ՆԱԽԱԳԱՅ ԱՍՏԻ ՊԱՏՈՒԵՐՈՎ՝ ՀԱԼԵՊԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ ԶԻՆՈՒՐԱԿԱՆ ՇԱՌԱՅՈՒԹԵՆԷ ՓԱՆՈՒԿՍ ՏՈՒՂՆԵՐՈՒԻՐԱՎԻՃԱԿԻՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ՀՈՒՐԶ ՀԱՆԴԻՊՈՄ

Երկուշաբթի, 31 Յունուար 2022-ին, Հալեպի Նահանգապետարանէն ներս, զինուորական ծառայութենէ փախուստ տուողներու, կամ գայն չյետած գողներու իրավիճակին կարգաւորման յանձնախումբը հանդիպում ունեցաւ Հալեպի



Նահանգապետարանի պատասխանատու մարմիններուն եւ Հալեպի աշիրապետներուն հետ՝ Սուրիոյ Նախագահի Պաշտարալ Ասատի ստորագրած զինուորական պարտադիր կամ պահեստի ծառայութենէ փախուստ տուողներուն ներման եւ անոնց իրավիճակին կարգաւորման հրամանագիրին գործադրութեան միջոցներուն քննարկման համար: Հալեպի Նահանգապետ Յուսէյն Տիապ շեշտեց Նախագահ Ասատի հրամանագիրին կարեւորութիւնը, որուն միջոցաւ սուրիական տարբեր Նահանգներուն մէջ զինուորական ծառայութենէ փախուստ տուողներուն իրավիճակը պիտի կարգաւորուի եւ անոնց ներում պիտի շնորհուի, յայտնելով, որ Հալեպի ժողովուր-



դը եւ աշիրապետները մեծ դերակատարութիւն պիտի ունենան այս գործընթացին մէջ՝ իրենց գաւակները քաջալերելով վերադառնալու իրենց շրջանները, շարունակելու իրենց բնականոն կեանքը եւ մաս կազմելու Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն: Նահանգապետ Տիապ յայտնեց, որ Սուրիոյ պետութիւնը պատրաստակամութիւն կը յայտնէ զինուորական ծառայութենէ փախուստ տուող քաղաքացիներն ու տեղահանուածները ընդունելու եւ անոնց դիւրութիւններ եւ օժանդակութիւններ ընծայելու: Իր կարգին, յանձնախումբը բացատրութիւն տուաւ կարգաւորման գործողութեան մանրամասնութիւններուն եւ նկատի առնուած միջոցներուն շուրջ, որպէսզի մեծ թիւով քաղաքացիներ օգտուին Նախագահական այս հրամանագիրէն, յատկապէս անոնք, որոնք սուրիական կառավարութեան հսկողութենէ դուրս շրջաններու մէջ կը գտնուին: Աշիրապետները խօսք առնելով, յայտնեցին, որ Հալեպի արեւելեան եւ հիւսիսային արուարձաններուն մէջ մարդասիրական միջանցքներ բացուեցան եւ հողատերերուն դիւրութիւններ ընծայուեցան, որպէսզի վերադառնան իրենց աշխատանքին եւ նպաստեն Սուրիոյ վերականգնումին: Նշենք, որ

## ՀԱԼԵՊԻ ՀՈԳԵՒՐ ՊԵՏԵՐՈՒ ՄԻՋԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Շաբաթ, 29 Յունուար 2022-ի առաւօտուն, Բերիոյ Հայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան իր մասնակցութիւնը բերաւ քրիստոնէայ հոգեւոր պետերու միջեկեղեցական հերթական ժողովին, հիւրընկալութեամբ



եամբ՝ Յոյն ուղղափառ եկեղեցւոյ Հալեպի նորընտիր Առաջնորդ Աֆրամ Մաալուլիի, Յոյն ուղղափառ համայնքի Առաջնորդարանէն ներս: Սըրբազան հօր կ'ընկերակցէր Արժ. Տ. Գառնիկ Ընկ. Չափանեան:



Ժողովականները շնորհաւորեցին Յոյն կաթողիկէ համայնքի նորընտիր Առաջնորդ Ծորճ Մասրին եւ Յոյն ուղղափառ համայնքի նորընտիր Առաջնորդ Աֆրամ Մաալուլին:

Ժողովը առիթ մը հանդիսացաւ անդրադառնալու օրակարգային կարգ մը հարցերու, անոնց շուրջ քննարկումներ կատարելու եւ յարմարաւետ որոշումներ գոյացնելու: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ եկեղեցիներու միութեան նուիրուած



աղօթքի շաբթուան արարողութեան, որ տեղի ունեցաւ հիւրընկալութեամբ Յոյն կաթողիկէ համայնքին:

Ժողովի աւարտին, հիւրընկալ առաջնորդը ի պատիւ համայնքապետներուն՝ սիրոյ սեղանի շուրջ համախմբեց բոլորը:

սոյն հանդիպումին մասնակցեցաւ նաեւ Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանի դիւանապետ տիար Զրիստափոր Հապոյեանը: Ուստի զինուորական փախստականի կամ այլ կարգավիճակ ունեցող համայնքի մեր գաւակները կրնան օգտուիլ Սուրիոյ Նախագահի ներման հրամանագիրէն եւ առաւելագոյնը մինչեւ վեց ամիս ներկայանալ համապատասխան կողմեր, իրենց կարգավիճակը յստակացնելու համար, նկատի ունենալով, որ անոնք որեւէ պատիժի ենթակայ պիտի չլլան:

## ՀԱՂՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՉԱՄԻՇԼԻԻ «ԱԻԵՏԻՍ ԱՆԱՐՈՆԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻԴԻ ԱՆՂԱՄԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ

Համազգայինի «Աւետիս Ահարոնեան» մասնաճիւղը իր անդամական ժողովի Բ. Նիստը գումարեց Կիրակի, 30 Յունուարի 2022-ի երեկոյեան ժամը 5:00-ին, «Խորէնեան» սրահէն ներս:

Ժողովը հանգամանօրէն ունկնդրեց եւ քննեց օրակարգի կէտերը՝ սկսեալ շրջանային ԻԳ. պատգամաւորական ժողովէն քիսած բանաձեւերէն: Ապա վարչութեան երկամեայ գործունեութեան տեղեկագիրը ընթերցուեցաւ եւ նորախորհրդարանի հաստատեց գաղութէն ներս համազգայինի ընդարձակումը ու մշակութային գործունեութեան ծաւալումը: Ժողովը ներկայացուց շինիչ առաջարկներով, որոնց իրագործման յանձնառու կը մնայ նորակազմ վարչութիւնը: Ընթաց-



եան տեղեկագիրը ընթերցուեցաւ եւ նորախորհրդարանի հաստատեց գաղութէն ներս համազգայինի ընդարձակումը ու մշակութային գործունեութեան ծաւալումը: Ժողովը ներկայացուց շինիչ առաջարկներով, որոնց իրագործման յանձնառու կը մնայ նորակազմ վարչութիւնը: Ընթաց-



քին խօսք առաւ վարչութեան ատենապետ Յակոբ Պարսումեան: Ան շեշտեց, թէ Համազգայինի հայ կրթական եւ մշակութային միութեան 2022-ի սեւեռակէտը պետք է դարձնել ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի սրբատառ կոնդակի հըռչակագիրը, որ կը կրէ «Սփիւռքի Տարի» խորագիրը ու հետեւեալ մեքերումը ըրաւ վեհափառ հայրապետին պատգամէն. «Չօրաւոր Սփիւռք կը նշանակէ զօրաւոր հայրենիքը եւ փոխադարձաբար զօրաւոր հայրենիքը Նախապայման է զօրաւոր Սփիւռքի»:



Ապա ժողովը ընտրեց նորակազմ հետեւեալ վարչութիւնը.

- Յակոբ Պարսումեան
- Յասմիկ Պոզոյեան
- Յասմիկ Տիգրանեան
- Մանուկ Դաւիթեան
- Կարպիս Ծիրիքճեան
- Ռուզան Պետրոսեան
- Դալար Տոնապետեան
- Վահէ Յովհաննեսեան
- Զրիստափոր Միքայելեան:

Աւարտին Շրջանային վարչութեան լիազօր Ռիթա Տեր Սարգիսեան խօսք առնելով շեշտեց կազմակերպչական աշխատանքին կարեւորութիւնը, յատկապէս երիտասարդականացնելով համազգայինի շարքերը եւ զարկ տալով քարոզչական աշխատանքին համազանցային հարթակին ճամբով, հայ մշակոյթի ոգին վառ պահելու նորահաս սերունդներուն մօտ: